

SUMMARY  
POEM OF HOVHANNES TUMANYAN “THE OLD WAR”

LUSINE GALSTYAN

One of Tumanyan’s best works devoted to the tragedy of Western Armenians and the liberation struggle of the poem “The Old War”, which was fragmentally or completely written in the 1890s, following the fresh traces of impressions from the Armenian massacres, and the most processed parts of which were published in 1915.

The best extracts of this poem are undoubtedly the lyrical, one of which is a classic example of Armenian literature; we are talking about the prologue preserved from the second chapter and completely separated from the poem “In the Armenian Mountains”.

РЕЗЮМЕ  
ПОЭМА ОВАНЕСА ТУМАНЯНА “СТАРАЯ ВОЙНА”

ЛУСИНЕ ГАЛСТЯН

Одним из лучших произведений Туманяна, посвященных трагедии западных армян и освободительной борьбе, является поэма “Старая война“, которая отрывочно или полностью была написана в 1890-ых – по свежим следам впечатлений от армянских погромов, и наиболее обработанные части которой были опубликованы в 1915-ом году.

Лучшими отрывками данной поэмы несомненно являются лирические, один из которых является классическим образцом армянской литературы; речь идет о сохраненном из второй главы прологе и самостоятельно полностью отделенном от поэмы стихотворении “В армянских горах”.

ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ  
ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

բ.գ.թ., դրոշմագր ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐԵԱՆ  
Խ. Արովեանի ան. ՀՊՄՀ Վ. Պարտիզոնու ան. Հայ նոր եւ նորագոյն  
գրականութեան եւ նրա դասասանդման մեթոդիկայի ամբիոն

**Բանալի բառեր՝** Յովհաննէս Թումանեան, հրապարակագրութիւն, քննադատութիւն, գրական արժէքներ, գիտական հայեացք, յուզական վերաբերմունք:

**Key words:** Hovhannes Tumanyan, publicity, criticism, literary values, scientific view, emotional attitude.

**Ключевые слова:** Ованес Туманян, публицистика, критика, литературные ценности, научный взгляд, эмоциональное отношение.

Յովհաննէս Թումանեանը, ներծնուած լինելով բանահիւսկան եւ գրական հարուստ աւանդներով, ստեղծողն է մի ինքնօրինակ գրական ժառանգութեան: Բանաստեղծին նուիրուած ցանկացած ուսումնասիրութիւն հետաքրքիր ու հաճելի ճանապարհորդութիւն է գրականութեան աշխարհ: Մտեցնելով ճշմարիտ բանաստեղծի ու անձնուրաց հանրային գործչի նրա կերպարները՝ ատելի պարզորոշ է դառնում բազմիցս գնահատուած Մեծի տեղը անցեալ ու ներկայ գրապատմական ոլորաններում: Անվիճելի է նրա թողած գրական ժառանգութեան դերը հայոց մշակոյթի պատմութեան մէջ, եւ թումանեանագիտութիւնը դեռեւս շատ անելիքներ ունի: Որքան էլ պնդենք, որ Յովհ. Թումանեանի մասին քիչ չի գրուել, կասկածից վեր է, որ նրա հասարակական, գրականագիտական, գրաքննադատական, մշակութային, լուսատրական ու կրթական գործունէութեան բնագաւառների գնահատման առումով դեռեւս թերանում ենք: Յովհ. Թումանեանը հայ գրականութեան դասականների շարքում եզակի է նման

գործունեությամբ, ինչը, ի հանրակէ, գեղարուեստական ժառանգութեան արժեւորման համար ածանցեալ դերում չի կարող լինել:

«Թումանեանը հմայիչ էր իբրեւ ստեղծագործութեան տեսաբան: Պէտք է նշել, որ նա իր ժամանակի գրողներից գրեթէ միակն էր, որ գրում էր հրապարակաւ»<sup>1</sup>:

Իբրեւ մտաւորական եւ գրող, ապրելով 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբի թոհուրոհում, նա չէր կարող անմասն մնալ ժողովրդի կեանքից ու հայրենիքի ճակատագրից: Հասարակական, սոցիալական, պատմական պայմանները պէտք է, որ երկնէին այնպիսի մէկին, ինչպիսին Յովի. Թումանեանն էր, ուստի նրա յայտնությունը հայ գրականութեան մէջ, ինչու չէ, նաեւ հասարակական կեանքում, պատճառաբանուած էր ու սպասուած:

Մեզնից ամէն մէկը Յովի. Թումանեանի ստեղծագործութեան մէջ ճանաչեց իրեն, վերյիշեց ազգային անցեալը, տեսաւ տխուր ներկան, հաւատաց վաղուան ու հպարտացաւ ապագայով՝ «Երանություն էր խոստացել յոյսս ինձ, / Մակայն չըզտայ նրան կեանքի մէջ... /... եւ կը գայ մի օր, / Որ կ'ընկնի ներկան վատշուէր, դաժան, / Նրա աւերի վերայ փառաւոր / Ապագան լուսոյ կը կանգնի նշան»<sup>2</sup>:

Այս ամէնով հանդերձ՝ բառական բարդ է Յովի. Թումանեանի տեղի, դերի ու նշանակութեան գնահատումը: Ծագումնաբանութեամբ Յովի. Թումանեանին կարելի է համարել Խաչատուր Աբովեանի գրական դպրոցի վերջին ներկայացուցիչը եւ որոշ առումով նաեւ արեւելահայ գրականութեան ու հասարակական կեանքի նորայայտ երեսույթների սկզբնաւորող ու հիմնադիր: Թումանեանական ազդեցությունը, յատկապէս հրապարակագրութեան, հասարակական մտքի, ազգային գիտակցութեան դարձնաբանութեան տեղաւորումն էր ու ուղեցոյց ու չափանիշ:

<sup>1</sup> «Թումանեանը ժամանակակիցների յուշերում», Եր., «Էդիթ Պրինտ», 2009, էջ 14:

<sup>2</sup> Թումանեան Յովի., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր առաջին / բանաստեղծութիւններ, Եր., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի ան. Գրականութեան Ինստիտուտ, 2018, էջ 44:

Եթէ իրեն նախորդող մի շարք հեղինակների գնահատությունն ու արժեւորումը պայմանաւորուեց Յովի. Թումանեանի վերաբերմունքով, ապա իրենից յետոյ եկող մի շարք դասականներ ուղղակի Յովի. Թումանեանի արմատից ընձիւղուեցին եւ դարձան նրա աւանդոյթների անմիջական շարունակութիւն՝ Աւետիք Իսահակեան, Ակսէլ Բակունց, Ստեփան Զօրեան, Համո Սահեան, Հրանդ Մատթէոսեան, եւ դեռ կենդանի է արմատը: Ուշագրաւ է, որ այսքանից յետոյ Վահան Տէրեանը «Հայ գրականութեան գալիք օրը» յօդուածում գրում է. «Թումանեանը կը մնայ իբրեւ մի ունիկում, եւ նրա ճանապարհը չի լինի ապագայ հայ պոեզիայի ճանապարհ»<sup>3</sup>:

Յովի. Թումանեան հեղինակի թողած գրական ժառանգութեան միջոցով հնարաւոր չէ ամբողջական պատկերացում կազմել Յովի. Թումանեան մարդու ու հասարակական գործչի մասին: Ղազարոս Աղայեանի մահուան տարելիցին Յովի. Թումանեանը նկատել է. «Ինչքան էլ շնորհալի լինէր <որպէս ստեղծագործող>, անհամեմատ աւելի բարձր էր որպէս ստեղծագործութիւն: Աստծոյ հագուադէպ յաջող ու պայծառ ստեղծագործութիւններից միսն էր նա»<sup>4</sup>: Այս տողերը ճիշդ բնութագիրն են նաեւ Թումանեանի:

Յովի. Թումանեանն այն մեծություններից էր, որ, լինելով տաղանդաշատ քնարերգու եւ օժտուած արձակագիր, չառանձնացաւ իր ստեղծագործական աշխարհում, չմնաց սոսկ մուսայի գերի, այլ դարձաւ հայրենիքի համար պայքարող մարտիկ՝ իր հանրային յայտնի գործունեությամբ, հրապարակախօսութեամբ՝ առաջամարտիկի կամքով վստահեցնելով, որ հայրենիքին պիտանի լինելուց առաւել պարզեւ չկայ ճշմարիտ բանաստեղծի համար:

<sup>3</sup> Տէրեան Վ., Երկերի ժողովածու, հ. 3, Եր., «Հայաստան», 1975, էջ 73:

<sup>4</sup> Թումանեան Յովի., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր վեցերորդ / քննադատութիւն եւ հրապարակախօսութիւն. 1887-1912, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 1994, էջ 361:

Յովհ. Թումանյանի հայրենասիրական գործունեության կարևորագույն մաս է կազմում հրապարակագրությունը: Նրան խիստ յուզում էին հասարակական – քաղաքական կեանքի հարցերը, որոնց առևի շատ անդրադարձաւ 10-ական թուականներին՝ գրելով հարիւրաւոր յօդուածներ ու տպագրելով ժամանակի մամուլի էջերում:

Դրանք վերաբերում էին մամուլին, դպրոցին, դաստիարակութեանը, ժողովրդի պատմական ճակատագրին ու գրականութեանը, քաղաքական, մշակութային ինքնուրոյնութեան իրաւունքին: Այս երկերում հեղինակը գեղարուեստական պատկերաւորման հարուստ միջոցներով առաջ է քաշում գրականփիլիսոփայական հարցադրումներ: Յովհ. Թումանյանի հրապարակախօսական երկերը, գրողի ոճին համապատասխան, ողողում են գեղարուեստական շնչով, որից էլ շարադրանքը դարձել է յուզական ու առաւել տպաւորիչ:

Նրա հրապարակագրութեան հիմնական առանցքը մարդու մարդկայնացման գերխնդիրն է, որը հեշտ բնութագրելու համար կարելի է յարաբերական բաժանումներով առանձնացնել. 1. գրականութեան ու գրողի դերի գիտակցումը հասարակական կեանքում, 2. ազգերի ճանաչողութեան մարմնացները բարեկամութիւն-թշնամութիւն գերխնդրի շրջանակներում, 3. կեանքի իրական ու կեղծ դարձերեսների խաչմերուկներում...

Համառօտ ակնարկով փորձենք անդրադառնալ մեր առանձնացրած հարցերի քննութեանը: Գէորգ Բաշինջաղեանի՝ «Գեղարուեստը հայրենիք չունի» տեսական հարցադրումին 1916 թ. գրուած յօդուածում Յովհ. Թումանյանը պատասխանում է մէկ այլ՝ արդէն շրջուած հարցադրմամբ՝ «Հայրենիքը գեղարուեստ ունի»: Ամէն հայրենիք ունի իր արուեստը, ամէն ժողովուրդ՝ իր գրականութիւնը: Եւ ամէն ազգի ու ժողովրդի գեղարուեստն է, որ բնորոշում է նրա կենսամակարդակի իւրայատկութիւնը: Ուստի, եթէ հայրենիքը գեղարուեստ ունի, ուրեմն՝ գեղարուեստն էլ

հայրենիք է ունենալու: Գեղարուեստի զարգացմանը նպաստելու գործում առաջնային դերը ժողովրդի կենսասիրութիւնից է ծնունդ առնում: «Գեղարուեստը հայրենիք ունի»<sup>5</sup>,– համոզում է Յովհ. Թումանյանը:

Ամփոխար է գրականութեան արժեւորման ու գնահատման վիճակը: 110 տարի առաջ գրուած մի շարք յօդուածներում բանաստեղծը ճշմարտութեան բացայայտման խիզախումով ցնցողից սթափեցնող սառը ջրով է ցօղում չափից աւելի ոգեւորուած տաքզուխներին: Ցաւօք, այսօր քիչ բան է փոխուել, կրկին մտահոգիչ է գրականութեան վիճակը: Այն, ինչպէս մեր ողջ իրականութիւնը, ներկայացուած է ծուռ հայելու մէջ եւ ցաւալիօրէն աստիճանաբար աւելորդ է դառնում: Յովհ. Թումանյանը գտնում է, որ հայոց ամբողջ նոր գրականութիւնը հազիւ թէ մի քանի ամսուայ ընթերցանութեան նիւթ լինի, սակայն քանի՞ հոգի կը գտնենք, որ ծանօթ լինի մայրենի գրականութեանը: «Միշտ կը տեսնէք բերան արած կրկնում են էս կամ էն գրողի անունը, գովում երկինք են հանում, կամ պախարակում, ցելխն են կոխում: Հետաքրքրուէք, հարց ու փորձ արէք, կը տեսնէք ծանօթ չի, կարդացել չի. էստեղից մի կտոր, էստեղից մի բրդուճ, յաճախ ծուռ ու սխալ: Եւ որքան գրական տգիտութիւն. ինչ կոպիտ ճաշակ. ինչ գոռեհիկ վերաբերմունք դէպի գրականութիւնն ու գրողները: Բնչ վիրաւորանք քննադատելիս, վիճելիս, օգնելիս, յօրեւանը կատարելիս, մինչեւ գերեզմանի եզերքը, մինչեւ թաղման օրը»<sup>6</sup>:

«Գրականութեանն ազգային պաշտպանութիւն պէտք է լինի» ծաւալուն յօդուածում Յովհ. Թումանյանը գրում է. «Գրականութիւն ունենալու համար ժողովուրդները պէտք է ոչինչ չխնայեն, եւ նոյնիսկ պաշտպանելու դէպքում էլ լաւ իմանան, որ իրենց

<sup>5</sup> **Նոյնը**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր եօթերորդ / քննադատութիւն եւ հրապարակախօսութիւն. 1913-1922, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 1995, էջ 548:

<sup>6</sup> **Նոյնը**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր վեցերորդ, էջ 178:

պահածներից ու պաշտածներից տասնից մինն է միջակ գրող դուրս գալու, հարիւրից մինը տաղանդաւոր եւ հազարից մինը հանճարեղ»<sup>7</sup>:

Յովհ. Թումանեանը զգուշացնում էր, որ միջակութիւնները արուեստում վտանգաւոր են: Նա «...շատ դիպուկ կերպով նկատում էր որոշ գրողների թերութիւններ եւ քմծիծաղով խօսում այդ մասին»<sup>8</sup>: Գրաքննադատութեան մէջ յաճախ տգիտութիւնը համարձակութեան շղարշի տակ փորձել է կասեցնել գրականութեան առաջընթացը: Անգամ քիչ չեն Յովհ. Թումանեանի անձն ու վաստակը իրենց «արշինով» չափողներ, որոնցից մէկը՝ Աւետիք Տէր-Յարութիւնեանը, նրան 1910 թ. որակել է իբրեւ տակ «գրականութեամբ հետաքրքրուող»: Յովհ. Թումանեանը պատասխանել է. «Դուք էլ կարծեմ քննադատութեամբ էք զբաղում»<sup>9</sup>:

Չնայած ընդունում էր, որ տաղանդներն էլ կարող են շեղումների, ծայրայեղութիւնների մէջ ընկնելու հակումներ ցուցաբերել, սակայն նրանց տաղանդը չի նսեմանում, աւելին՝ շեղումները տաղանդի դրսեւորումներ են համարում: Բանաստեղծը, վկայակոչելով Հայնրիխ Հայնէին, նկատում է, որ որքան էլ աներկբայ է, որ բանաստեղծը կապուած է իր ժամանակի, հասարակութեան հետ անթիւ, անտեսանելի թելերով, կապերով, միեւնոյն է, անընդունելի է, որ ճշմարիտ արժէքներ ստեղծող մէկը իր հայեացքները քաղաքականացնի: Եւ կարիք չկայ բռնի կերպով մի միտք, մի գաղափար առնել եւ դառնալ նրա քարոզիչը գեղարուեստի ձեռով՝ անունը հրապարակախօսութիւն դնելով, թէկուզ եւ այդ միտքը կամ գաղափարը շատ հրատապ խնդրի շուրջ լինի եւ յուզի ժամանակի հանրութեանը: Եւ

<sup>7</sup> **Նոյնը**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր եօթերորդ, էջ 244:

<sup>8</sup> «Թումանեանը ժամանակակիցների յուշերում», էջ 45:

<sup>9</sup> **Թումանեան Յովհ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր վեցերորդ, էջ 479 («Դժբախտ աստղի տակ ծնուած մարդը» յօդուածը):

հենց այս է պատճառը, որ յաճախ «տաղանդաւոր գրողից աւելի մի անտաղանդ գրող է աղմուկ հանում աւելի շատ ու հոչակում»<sup>10</sup>: Սակայն, լուսատես լինենք, ժամանակի հզօր մեքենան կը լուսնայ մրից ամէն ինչ, եւ կեղծ, ընդամենը հաճոյացող բանաստեղծների բերած գոյներն անպայման կը խունանան: Այս պարագայում յատկապէս նշանակալից է գրաքննադատութեան առաքելութիւնը:

Յովհ. Թումանեանին որպէս հրապարակախօս եւ քննադատ ամբողջացնելու համար կարեւորում ենք նաեւ նրա գործունէութիւնը սկսնակ գրողների գնահատման եւ արժեւորման դժուարին գործում: Գրական քննադատութիւնը, որպէս գեղարուեստի իմացութիւն, գրականութեան անտրոհելի մասն է, որը փորձում է ընթերցողի համար բացայայտել բնագրերում չհասկացուած-չընկալուածը: Թումանեանի՝ որպէս քննադատի, մեծ առաքելութիւնը գրական արժէքների դասակարգումն է՝ սկսած յայտնի ու դասական հեղինակների երկերի վերագնահատումից մինչեւ նորայայտ գրողների ճանաչումը: Մեծերի կողքին Յովհ. Թումանեանը չի խորշում գնահատել երիտասարդ հեղինակների մուտքը եւ յորդորում է «գրականութիւն սիրող ու հասկացող անհատներին»<sup>11</sup> հովանաւորել նրանց տնտեսապէս: Իսկ «բանաստեղծի հոչակ ունենալու հիւանդութեամբ տառապող ապաշտորհների» ստեղծածին հեզնանքով է վերաբերում: Նրանց դերի եւ տեղի ճշգրտումը գրաքննադատութեան ուշադրութեան կենտրոնում է: Յովհ. Թումանեանը գտնում էր, որ լռութիւնը կը խաբի անտաղանդ հեղինակին, եւ նա իրեն շարունակ բանաստեղծ կարծելով՝ կը վնասի գրականութեանը<sup>12</sup>:

<sup>10</sup> **Նոյնը**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր եօթերորդ, էջ 537:

<sup>11</sup> **Նոյնը**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր վեցերորդ, էջ 258 («Նորերի համար»):

<sup>12</sup> **Նոյն տեղում**, էջ 13 («Գրախօսութիւն»):

Բացի դպրոցի, գրականության ու կրթության հարցերի քննությունից՝ Յովհ. Թումանյանի հրապարակախօսական միտքը ծառայում է նաև ազգային անցեալի ու ներկայի շուրջ: Նա փորձում է ճշմարտության դառը հաբերով բուժել հայրենասիրությունը, թոյլ չտալ, որ այն տգիտության, անձնական շահերի, թիրիմացությունների գոհը դառնայ. «Երկիր ունենք – չենք ճանաչում, պատմություն ունենք – չենք ճանաչում, ժողովուրդ ունենք – չենք ճանաչում, գրականություն ունենք – չենք ճանաչում, լեզու ունենք – չենք իմանում»<sup>13</sup>:

Հումանիստ բանաստեղծն իր ողջ կեանքում ժողովուրդների խաղաղության, ազգերի եղբայրության եւ հաւասարության համար պայքարող մարտիկ էր, նա գտնում էր, որ ազգերին լաւ ճանաչելու, նրանց միջեւ փոխադարձ սէր ու յարգանք ստեղծելու համար աւելի ազնիւ հող ու աւելի մեծ կապ չի կարող լինել, քան ազգային գրականությունն է: «Հին յունական բանաստեղծների Պեգասը խմում էր... վճիտ աղբիւրից եւ ապրում էր... մեր Սասունցի Դաւթի հրեղէն ձին իր հօրեղբայր Ձէնով Օհանը կապել է խոտում...»<sup>14</sup>, – մտահոգում է Յովհ. Թումանյանը: Նա կոչ է անում հայ գրողներին համախմբուել եւ իրենց տաղանդն ի սպաս դնել ազգի բարօրութեանը:

Իր իւրօրինակ մարդկային տեսակով պակաս ուշագրաւ չէ ու բացայայտման կարօտութիւն ունի նաև Յովհ. Թումանյան անհատ–մարդը, որ կարող է բնութագրել մի ողջ ազգի բնատրութիւն ու մտածողութիւն: Իր խառնուածքով Յովհ. Թումանյանը սիրում էր ընկերական աշխոյժ միջավայր, ասուլիս, գրոյց: Նրա բնութագրմամբ՝ Թիֆլիսը «մեծ հարսանքատուն» էր, իսկ իր բնակարանի հիւրասրահն այս տրամաբանութեամբ յիրաւի հաւաքատեղի էր ու մէջլիս, ուր քննարկում էին մշակութային ու ազգային խնդիրներ, կազմակերպում գրողների ու մտաւո-

րականների հետ հանդիպումներ: Յովհ. Թումանյանը շատ էր սիրում քէֆեր–կերուխումներ, նա յաճախ օրն անց էր կացնում որպէս սեղանապետ, թամադա, սիրում էր ճոխ եւ յատկապէս ընկերներով շրջապատուած սեղաններ, գրոյց, ծիծաղ ու ուրախութիւն: Յովհ. Թումանյանի տունը հարազատների, ընկերների ու անգամ պատահական օտարների համար վեր էր ածուել վանքի, շարունակ կրկնուող տօնախմբությունների, յարատե տեսակցությունների, խօսքի, գրոյցի ու ուրախութեան անփոխարինելի սրբավայրի: Դերենիկ Դէմիրճեանն ափսոսանքով նկատում է. «Նա քիչ գրեց եւ գրեց ի միջի այլոց կարծես: Նրան խանգարում էր բազմազբաղ կեանքը եւ նիւթականի կազմակերպումը»<sup>15</sup>: Երբ բարեկամներն ակնարկում էին, թէ նրանից շատ ժամանակ են խլում քէֆերը, Յովհ. Թումանյանը պատասխանում էր. «Ախպէր, ամէն մարդ մի յատկութիւն ունի, որի մասին խօսում են, ինձնից յետոյ թող իմ մասին ասեն, թէ էն մարդը լաւ քէֆ անող էր»<sup>16</sup>:

Յովհ. Թումանյանի կազմակերպած այդ բազմաթիւ քէֆերն իրական գրական հաւաքոյթներ էին եւ լրացնում էին գրողների միութիւն չունենալու պակասը: Դ. Դէմիրճեանը յիշում է. «Թումանյանը հիւրամոլ էր եւ չէր յանձնուում՝ մինչեւ մէկին չէր բերում տուն՝ նստեցնելու իր սեղանի շուրջը»<sup>17</sup>: Իր աշխուժութեան ու կենսասիրութեան վարակիչ յատկութեամբ Ամենայն Հայոց Բանաստեղծը թովեց նաև ողջ հայ գրականությունն ու հասարակական կեանքը՝ դառնալով մեր նոր քերթութեան անհաս Արարատը եւ վերից, միայն իրեն յատուկ թումանյանական առեղծուածային ժպիտով երանութեամբ հսկում է՝ չընդմիջուող ու յարատեւ դասեր տալով սերունդներին:

<sup>13</sup> Նոյն տեղում, էջ 174 («Մեծ ցալը»):

<sup>14</sup> Նոյն տեղում, էջ 409 («Գրողի նամակները»):

<sup>15</sup> «Թումանյանը ժամանակակիցների յուշերում», էջ 45:

<sup>16</sup> Նոյն տեղում:

<sup>17</sup> Նոյն տեղում:

**SUMMARY**  
**ON TUMANYAN'S LITERARY CRITICISM AND PUBLICITY**

*NAIRA KHACHATRYAN*

The most important part of the patriotic activity of Hovhannes Tumanyan is his publicistic work. He was very worried about the issues of socio-political life, which he touched upon more in the tenth years, writing hundreds of literary and publicistic articles and publishing them on the pages of the modern press. With his progressive views, he contributed to the development of Armenian publicistics: in a number of his articles – with an artistic-emotional attitude and deep analysis, having unified publicistic and scientific research. Tumanyan's great mission, as a critic, is the classification of the literary values, starting with reestimation of the works of famous and classical authors to cognition-classification of the new writers.

The poet humanist throughout his life was a fighter for peace, fraternity and equality of peoples and believed that for a complete cognition of nations, the creation of mutual love and respect, more honest soil and a greater connection could not be than literature.

**РЕЗЮМЕ**  
**О ЛИТЕРАТУРНОЙ КРИТИКЕ И ПУБЛИЦИСТИКЕ**  
**ТУМАНЯНА**

*НАИРА ХАЧАТРЯН*

Наиважнейшей частью патриотической деятельности Ованеса Туманяна составляет публицистика. Его сильно волновали вопросы общественно-политической жизни, которых он больше коснулся в десятых годах, написав сотни литературно-публицистических статей и опубликовав их на страницах

современной прессы. Своими передовыми взглядами он способствовал развитию армянской публицистики: в ряде своих статей - художественным-эмоциональным отношением и глубоким анализом, объединив публицистику и научное исследование. Великой миссией Туманяна, как критика, является классификация литературных ценностей, начиная с переоценки работ известных и классических авторов до познания-классификации новоявленных писателей.

Поэт гуманист в течение всей своей жизни являлся борцом за мир, братство и равенство народов и считал, что для полного познания наций, создания взаимной любви и уважения более честной почвой и большей связью быть не может, чем литература.

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԸ

*բ.գ.թ., Պրոֆ. ԷՄՄԱ ԱԽՏԵԱՆ*  
*«Հայկական Գիտահետազոտական Ասոցիացիա Վրաստանում»*  
*ՀԿ նախագահ*

**Բանալի բառեր՝** Վրաստան, հայեր, վրացիներ, ժողովուրդ, բարեկամություն, հաշտություն, Հայարտուն, Վերնատուն:

**Ключевые слова:** Грузия, армяне, грузины, люди, дружба, примирение, Айартун, Вернатун.

**Key words:** Georgia, Armenians, Georgians, people, friendship, reconciliation, Hayartun, Vernatun.

Առանց ժողովուրդների կապի, փոխներգործության չկա մշակույթ, գրականություն: Աշխարհի մեծ գրականությունների ու գրողների հարստության գաղտնիքը նախելառաջ այն է, որ նրանք ներառել են իրենց եւ ուրիշ շատ ժողովուրդների համամարդկային բիրտեղացած հարստությունները:

Այդ հարցը շօշափելիս առաջին պլան է մղում հայ գրականության խոշոր ներկայացուցիչը՝ Յովհաննես Թումանյանը՝ թե՛ իր էությունը, թե՛ իր կատարած գործով եւ թե՛ գրչով: Դժուար է այդ երեքից որեւէ մեկին առաւելություն տալ, քանզի նա իբրեւ մարդ, հասարակական գործիչ ու բանաստեղծ անկրկնելի է:

Անկրկնելի է Յովհ. Թումանյանը եւ իբրեւ մեր երկու ժողովուրդների՝ հայերի ու վրացիների բարեկամության ջատագով, որն առ այսօր լուսաւորում է մեր հոգեւոր կեանքի ոլորտները, առաւել եւս՝ վիրահայ գրական աշխարհը:

Մեծ Լոռեցին Թբիլիսիում էր դեռեւս 1883-ից, 14 տարեկան հասակում, ուր եկել էր սովորելու նպատակով: Ներսիսեան դպրոցը շատ էր գրաւում նրան:

Դժուարին էին Յովհ. Թումանյանի համար թբիլիսեան տարիները: Չնայած դրան՝ նա չէր կարող չհմայուել այս քաղաքի իւրայատուկ կենցաղով: «Ջուռնա, դիոլ, դայիրա, նադարա, ծափ, ծիծաղ, պար, երգ... Էն էլ ոչ թէ տներում, այլ դուրսը, դռների, կտուրների, մանաւանդ իրիկնապահերին: Կիրակի ու տօն օրերը հո, գլուխ բեր, որ դիմանա: Ջուգուած, զարդարուած չրխկում ու զրնգում էր ամբողջ քաղաքը: Տեսնողը զարմանում էր, թէ էս մարդիկ նրբ են աշխատում, որ էսպէս շարունակ ուրախանում են ու պար գալիս»<sup>1</sup>, – գրում է նա: Իր անմահ «Գիքոր»-ում եւս տալիս է հին Թիֆլիսի գունեղ պատկերը՝ իրար ետեւից սլացող կառքեր, ուղտերի սայլեր, կանաչի բարձած ասանակներ, թաբախները գլխներին կինսօներ, կապիկ ման ածող պարսիկ, մրգով լիքը խանութներ, դէզերի նման դարսած գոյնգոյն չիթեր, տեսակ տեսակ խաղալիքներ... Թումանյանը սիրեց այդ քաղաքն ու դրան տօն տուող վրացական զուարթ ոգին: Եւ ոչ միայն քաղաքը, այլեւ ողջ Վրաստանը:

Մի առիթով Արասթումանն անուանում է «փոքրիկ գեղեցիկ հովիտ», որն անջնջելի ու հաճելի էջ է կազմել նրա յիշողության մէջ: «Ճշմարիտ որ սիրելի Արասթուման..., «այնքան թանկագին ցնորքների ու զգացմունքների հետ... կապուած...»<sup>2</sup>, – գրում է բանաստեղծը:

Յովհ. Թումանյանը Թբիլիսիում է սկսում իր գրական գործունէութիւնը:

Անուանութիւնից յետոյ ընտանեկան անթիւ հոգսեր, բնակարանային ծանր պայմաններ: Նա ստիպուած է եղել յաճախ փոխել բնակարանը. սկզբում ապրել է Հավլարարում, ազգականի մօտ, յետոյ՝ Պլեխանովի պողոտայի նեղլիկ ու խոր մի նկուղում, այնուհետ

<sup>1</sup> **Թումանյան Յովհ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր եօթերորդ / քննադատութիւն եւ հրապարակախօսութիւն. 1913-1922, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 1995, էջ 28:

<sup>2</sup> **Նոյնը**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր տասներորդ / նամակներ. 1905-1922, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 1999, էջ 82:

տեւ Խարվուխ թաղամասում, ամուսնությունից յետոյ՝ կնոջ ծնողների բնակարանում, ապա՝ Էնգելսի փողոցում, եւ վերջին 14 տարին՝ Սոլովակում, այժմ՝ Ամաղլեբա փողոց, որտեղ եւ այսօր նրա անուան գիտամշակութային կենտրոնն է՝ «Թումանեանի տունը»:

Յովհ. Թումանեանը երիտասարդ հասակից պատմական դէպքերի յորձանուտում էր: Հայ-թուրքական կռիւների, ազգային կուսակցությունների հրահրած հայ-վրացական բախումների, ժողովրդական բազմաթիւ յուզումների ականատեսն իր ունեցած հեղինակութեամբ հնարատրինս գսպում էր դրանց դրսեւորումները: Յիշարժան է այն, որ երբ 1905-ին Լոռու եւ Ղազախի շրջաններում, Շուլավերում սկսում են հայ-թուրքական ընդհարումները, օգնութեան համար ժողովուրդը դիմում է բանաստեղծին: Նա հաւաքում է 100 ձիաւոր, յեծնելով Մարս ձին, շրջում է գիւղից գիւղ, հայաբնակ ու թուրքաբնակ վայրերը խաղաղութեան կոչով: Մի առիթով գրում է. «Ամէն ջանք շարունակ գործ եմ դրել մեր գաւառներում խաղաղությունը պահելու եւ կոտորածների առաջն առնելու: Եւ այսօր եւ այնքան գոհ չեմ, որ գրականութեան մէջ մի որեւէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներեւ կարողացայ իրար դէմ կանգնած ժողովուրդների սրերը պատեան դնել տալ եւ շատ ու շատ անմեղների ազատել այս գազանական կոտորածից»<sup>3</sup>:

Իր հոգու բոլոր թելերով աշխատաւոր ժողովրդի հետ կապուած գրողը վրդովուած էր 1918-ի Դեկտեմբերի հայ-վրացական ընդհարումից, ինչը մենշեիկեան եւ դաշնակցական ուժերի շովինիստական քաղաքականութեան արդիւնք էր:

Այդ օրերին «Թիֆլիսակի լիստոկ» թերթում տպագրում է յօդուած՝ ուղղուած այդ «սոսկալի անմիտ եւ աղաղակող» ընդհարման դէմ: Նա այդ թիրիմացությունը վերջ տալու կոչ է անում եւ առաջին օրինակն ինքը ցոյց տալիս: 1918 թ. Դեկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը գրութիւն է ուղարկում Յովհ. Թումանեանի ստորագրութեամբ,

<sup>3</sup> **Նոյն տեղում**, էջ 14-15:

որի մէջ Հայոց Հայրենակցական Միությունների կենտրոնական խորհրդի անունից յայտարարում է վճռական բողոք կատարող արինայեղութեան դէմ ու պահանջում է անմիջապէս դադարեցնել թշնամական գործողություններն ու գումարել հայ-վրացական կոնֆերանս՝ խաղաղ ու հաշտ ճանապարհով վերջ տալու կործանարար հետեւանքներով յղի այս բախումներին:

Վրաց հասարակական եւ գրական գործիչների հետ միասին նա ստիպուած է լինում բանակցություններ վարել այն ժամանակուայ վրացական կառավարութեան ներկայացուցիչների հետ, միայն թէ խաղաղութիւն հաստատուի: «Թշնամությունը, – գրում է Յովհ. Թումանեանը, – որ ստեղծուած է մեր ժողովուրդների մէջ, արհեստական է, իսկ սերն ու եղբայրութեան զգացմունքը բնական եւ շատ ատելի ուժեղ, քան թէ կարծում են մեզանում»<sup>4</sup>:

Պատերազմի ու խաղաղութեան հարցը երկու ժողովուրդների միջեւ միշտ գտնուել է Յովհ. Թումանեանի ուշադրութեան կենտրոնում, եւ ջանում էր անարձագանգ չթողնել վիճարկող կողմերին թշնամացնելու նպատակով բանաւոր ու գրաւոր բանասարկությունները, չարամիտ մեկնաբանությունները: Այդուհանդերձ, Յովհ. Թումանեանն այդ ճակատում գրեթէ մենակ էր: Ահա ինչ է գրում նրա ժամանակակից դրամատուրգ Շավլա Դադիանին. «Երբ Վրաստանում եւ Հայաստանում իրար դէմ թշնամական ժանիքներ էին սրում, մտաւորականութեան շրջանում Թումանեանի նման քչերը կային: Մենակ էր Յովհաննէսը. որք էր մնացել այս անվեհեր մարդն այն տխուր ու մոայլ օրերին՝ ժողովուրդների եղբայրութեան քարոզով... Սրտանց ցանկանում էիր, որ շնտ շատերն այդ որբի նման լինէին, նրա կողքին, բազմանային թէ՛ մեզանում, թէ՛ մեր իւրայինների մէջ, բայց այդ տխուր օրերին դա միայն երազել կարելի էր»<sup>5</sup>:

<sup>4</sup> **Նոյնը**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր եօթերորդ, էջ 390:  
<sup>5</sup> «**Ուղեցոյց աստղը**» / վրաց մտաւորականները Յովհաննէս Թումանեանի մասին, կազմեց, վրացերէնից թարգմանեց եւ ծանօթագրեց Հրաչեայ Բայրամեանը, Եր., 1999, էջ 93-94:



Այս առիթով գրախօս են Եղիշէ Չարենցի գնահատականները. «Նա Թիֆլիսում, այդ բազմացեղ քաղաքում, Արեւելքի եւ Արեւմուտքի այդ երկրներանգ խառնարանում, դարձել էր միջցեղային մերձեցման աշտարակ, այլազան մշակոյթների սինթետիկ դէմք... Ամէն ժողովրդի ու ցեղի պօտ, ամէն մշակոյթի տիպական ներկայացուցիչ նրա շուրջն էին խմբում, հարազատանում նրան...»<sup>6</sup>:

Ուսումնասիրելով վրաց պատմութիւնն ու գրականութիւնը՝ Յովհ. Թումանեանը գալիս է այն համոզման, որ Վրաստանը թէ՛ հնում, թէ՛ նոր ժամանակներում միշտ էլ գտնուել է առաջատար ժողովուրդների շարքում, որ իր ազնիւ մաքառումների, վսեմ ձգտումների եւ սրտի պարզութեան համար արժանի է լաւագույն օրերի: Այդ ժողովրդի գրականութեան մէջ առաջին տեղը, իրաւամբ, նա տալիս է Շոթա Ռուսթավելուն, իսկ նրա քնարը համարում ոսկեհար: Նա Ռուսթավելուն դասում է համաշխարհային գրականութեան մեծ ներկայացուցիչների թուին:

Իոսէր Գրիշաշվիլին յիշում է, որ գրական աշխատանքի շուրջ գրոյցից յետոյ Յովհաննէսը յայտնեց. «Ապաքինուելուն պէս պիտի թարգմանեմ Ռուսթավելի, Ֆիրդուսի եւ Հոմերոս»<sup>7</sup>: Սակայն անողորմ հիւանդութիւնը խանգարեց:

Ըստ Յովհ. Թումանեանի՝ «վրացու անմիջական ու սրտաբաց բնատրութիւնը, բնական մաքրութիւնն ու անարատութիւնը, սրտի ազնուութիւնը, ազատութիւնն ու գեղեցկութեան սէրը, այս բոլորն ամէն կողմից լուսատրուած է կեանքի սիրով ու նուրբ վշտով Ռուսթավելու մօտ, նա իր ամբողջ էութեամբ վրացի բանաստեղծ է»<sup>8</sup>, եւ այս յատկութիւնները, որ ներդաշնակօրէն մարմնատրուած են «Վազրենատր»ում, բնորոշ են բոլոր ժողովուրդների համար:

<sup>6</sup> **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հատոր վեցերորդ, Եր., 1967, էջ 93-94:

<sup>7</sup> «Ուղեցոյց աստղը», էջ 81:

<sup>8</sup> **Թումանեան Յովհ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր եօթերորդ, էջ 400:

Յովհ. Թումանեանը մտայնացել էր կազմել ժողովածու՝ նուիրուած երկու ժողովուրդների փոխադարձ կապին ու եղբայրութեանը: Նա սկսում է հաւաքել նիւթեր, փաստեր: 1919 թ. մամուլում նիւթերի համախմբման ցանկութեամբ յայտարարութիւն է տպագրում:

Այո՛, սիրելի էր Յովհ. Թումանեանի համար Վրաստանը, բազում փորձութիւնների բովով անցած նրա բովանդակալից ու հետաքրքիր ճամբան:

Վրաց անուանի բանաստեղծ Տիցիան Տաբիձէն Յովհ. Թումանեանին, իբրեւ հայ եւ վրացի ժողովուրդների մշակութային մերձեցման համար պայքարողի, անուանել է ռահվիրա: Եւ զարմանալի չէ, որ նրա յիսնամեակին նուիրուած հանդէսները Թիֆլիսում շարունակուել են շուրջ մէկ ամիս եւ վերածուել համաժողովրդական ցոյցերի՝ յանուն ժողովուրդների բարեկամութեան:

Իսկ բանաստեղծի յուղարկատրութիւնը վեր է ածուել Անդրկովկասի ժողովուրդների բարեկամութեան վիթխարի ցոյցի: Տեղին է մէջբերել Իոսէր Գրիշաշվիլու բանաստեղծութեան տողերը.

*Գնում ես... Ահա անցեալը քեզ հետ,  
Սակայն ոչ թէ՛ հին փառքը տանելով.  
Երկինքն ամպերով ահա լուսաւէր  
Կը քաղցրանայ քո լոյս ժայտներով<sup>9</sup>:*

Յովհ. Թումանեանն իր հայրենակիցներին անուանում էր «եղբայրութեան ու սիրոյ էնքան կարօտ ժողովուրդ»:

Բանաստեղծը մի առիթով գրել է. «Ես հաւատում եմ, գալու է այն օրը, որ բոլոր շովինիստների ջանքերին հակառակ, յաղթանակելու է ժողովուրդների միութեան ու եղբայրութեան գաղափարը, ազատութեան մէջ աւելի ու աւելի են ամրանալու մեր դարատր եղբայրական կապերը եւ մեր ինքնուրոյնութիւնը, շքեղ

<sup>9</sup> «Ուղեցոյց աստղը», էջ 89:

ու ինքնատիպ, ծաղկելու է մեր գեղարուեստի ու գրականության մէջ: Եւ Վրաստանը, որ չքնաղ է եղել նոյնիսկ իր դժբախտութեան օրերում, ազատ Կովկասի, ազատ ժողովուրդների եղբայրութեան մէջ պէտք է դառնայ անելի չքնաղ ու անելի սիրելի»<sup>10</sup>:

Յովհ. Թումանեանի՝ Վրաստանի նկատմամբ տաժաժ յարգանքի ու սիրոյ մասին ամենավաղ ապացոյցն ըստ իս բանաստեղծի կտակն է՝ իր աճիւնը յուղարկաւորելու իր այնքան սիրած Թիֆլիսում:

Նրա ցանկութիւնը կատարուեց: Ու մենք՝ վիրահայերս, հնարաւորութիւն ունենք մեծ սիրով ու հպարտութեամբ այցելելու մեր հայրենակցին (մենք նրան միշտ կենդանի ենք զգում)՝ Ամենայն Հայոց Բանաստեղծին, եւ իր սիրելի Վրաստանի բուրումնաւէտ ծաղիկները խոնարհելու նրա շիրմին:

## SUMMARY

### HOVHANNES TUMANYAN AND GEORGIA

*EMMA AKHTYAN*

Hovhannes Tumanyan is an outstanding supporter of the friendship of two nations, Armenians and Georgians. He had as much authority and power as he could to stop the Armenian-Turkish struggles, the Armenian-Georgian clashes provoked by national parties. “Enmity,– as Tumanyan wrote,– created in our peoples, is artificial, and love and brotherhood are natural and much stronger than they think in us”.

Hovhannes Tumanyan believed that only science, literature and art are capable of overcoming the abyss that divides peoples and that they alone can create the best life of the future and the real person.

<sup>10</sup> Թումանեան Յովհ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր եօթերորդ, էջ 386-387:

## РЕЗЮМЕ ОВАНЕС ТУМАНЯН И ГРУЗИЯ

*EMMA AKHTYAN*

Ованес Туманян - выдающийся сторонник дружбы двух народов, армян и грузин. У него было столько авторитета и власти, сколько он мог, чтобы остановить армяно-турецкие войны, армяно-грузинские столкновения, спровоцированные национальными партиями. “Вражда,– как писал Туманян,– созданная в наших народах, искусственна, а любовь и братство естественны и намного сильнее, чем они думают в нас”.

Ованес Туманян считал, что только наука, литература и искусство способны преодолеть пропасть, которая разделяет народы, и что они одни могут создать лучшую жизнь будущего и реального человека.

# ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՇԱՌԱԻՂՆԵՐԸ. ԱՐՏԱԻԱԶԴ

*բ.գ.թ., դրոշմային ԱՐՄԵՆՈՒՇԻ ՄՈՒՐԱԳԵԱՆ  
Խ. Արովեանի ան. ՀՊՄՀ Վ. Պարպրիզունու ան. Հայ նոր և նորագոյն  
գրականության և նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոն*

**Բանալի բառեր՝** ճակատագիր, ժողովուրդ, յիշողութիւն, տխրութիւն, Թումանեանի զաւակները:

**Key words:** fate, people, memory, sadness, Tumanyan's children.

**Ключевые слова:** судьба, народ, воспоминание, тоска, дети Туманяна.

*Ուղեկցում և բոլորին՝ մանկութիւնից ծերութիւն,  
Ինքն մնում ևս յաւեր՝ Արարարի պէս կանգուն:*

*Սուրէն Մուրադեան*

Ամէն մի հայ իր հոգու խորքում Թումանեան ունի: Նա կարծես մեր մի մասնիկն է, որ վաղ մանկութիւնից թափանցում է մեր էութեան մէջ, հարազատի նման մտերմանում, և ամբողջ կեանքում մենք մնում ենք նրա կախարդական գերութեան մէջ, նրա ստեղծագործութիւնների հետ մեծանում, իմաստնանում և փորձում գրողի խորհրդով աշխարհին նայել բարի սրտով ու պայծառ հայեացքով:

Յովհ. Թումանեանի կեանքի ու ստեղծագործութեան մասին հազարաւոր յօդուածներ, ուսումնասիրութիւններ են գրուել ու կը գրուեն, և երբեք էլ չի սպառուի հետաքրքրութիւնը մեծ գրողի, ինչպէս նաեւ նրա անբաժանելի մասը կազմող զաւակների հանդէպ: Նրանք բոլորն էլ օժտուած էին վեհ արժանիքներով, իսկ որդիներն իրենց տխուր ճակատագրերով կը մնան մեր ժողովրդի

պատմութեան ու յիշողութիւնների մէջ: Անշուշտ, իր երեխաների գեղագիտական դաստիարակութեան հարցում մեծ դեր ունէր գրողը՝ իր հարուստ կենսափորձով, խորիմաստ պատգամներով, ինչպէս նաեւ գրական այն միջավայրը, ուր ձեւաւորում էին նրանց ճաշակն ու հետաքրքրութիւնները: Յովհ. Թումանեանն անչափ ուշադիր էր իր զաւակների հանդէպ: Նրանցից իւրաքանչիւրի մէջ փնտռում էր իր տաղանդի արձագանգը. «Ես կ'ուզէի ամէն մէկիդ մէջ տեսնել իմ շունչը, իմ հոգու մի մասը...»<sup>1</sup>: Զաւակները բոլորն էլ ծանօթ էին իրենց հօր ստեղծագործութիւններին, գրելու, թարգմանելու փորձեր էին արել և բանաստեղծի խորհրդին հետեւելով՝ որոշ ժամանակ պահում էին օրագիր-յիշատակարան:

Չորրորդ զաւակը Արտաւազդն էր (1894-1918), որի գրական-յուշագրական նիւթերը պահպանուել են նրա անձնական հարուստ արխիւում: Այն համապարփակ ներկայացնում է շնորհալի երիտասարդի հետաքրքրութիւնները, ձգտումներն ու ծրագրերը: Ականատեսների վկայութեամբ՝ նա նման էր հօրը թէ՛ արտաքինով, թէ՛ բնատրութեամբ: Արտաւազդը Վահան Թոթովենցի յուշերում հետեւեալ բնութագրումն ունի. «Թումանեանի բոլոր զաւակների մէջ Արտաւազդն էր շատ նման իր հօրը՝ արտաքին ֆորմաներով, ժպիտով, ձայնի տոնով, շարժումներով ու գոյներով: Նա ունէր չափազանց գրական հակում, փորձում էր պիէսներ գրել, անսահման սէր ունէր դէպի մանուկները»<sup>2</sup>:

Յովհ. Թումանեանի թանգարանի գիտական անձնակազմը, ուսումնասիրելով մեծ գրողի ընտանեկան արխիւը, տարիներ առաջ նախաձեռնեց «Թումանեանի զաւակները» մատենաշարի լոյսընծայումը, որի սկիզբը դրուեց 2011 թ. տպագրուած «Աշխէն. յուշեր և ընտանեկան պատմութիւններ» ժողովածուով, որին հետեւեց Արտաւազդ Թումանեանի նամակահիւն:

<sup>1</sup> **Սաֆրազբեկեան Իրմա**, Թումանեանի ընտանիքի կեանքի էջերից, Թումանեան – 140, Եր., 2009, էջ 119:

<sup>2</sup> «Թումանեանը ժամանակակիցների յուշերում», Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 138:

Գիրքը խօսում փաստերով, ժամանակագրական կարգով եւ մանրամասնօրէն ներկայացնում է տաղանդաւոր Արտաւագրի կեանքի ճանապարհը: Բաւականաչափ հարուստ է նամականին, բազմաբնոյթ բովանդակութեամբ՝ ուղղուած տարբեր մշակոյթի գործիչների, գրողների, նկարիչների, հարազատների: Գրքում ընդգրկուած մտերմիկ, անկեղծ յարաբերութիւններ վկայող նամակների ընտրանին առաջին հայեացքից կարող է նեղ անձնական տպաւորութիւն թողնել, բայց ընթերցման ժամանակ բացայայտում է Թումանեանի որդին՝ իբրեւ արուեստագէտ՝ օժտուած գրելու եւ նկարելու շնորհով: Նուրբ ու զգայուն է նրա ներաշխարհը: Տողերի արանքում անկարելի է չնկատել երիտասարդի անսահման սէրը հարազատների, հայրենի եզերքի, հոգեւոր արժէքների հանդէպ:

Մանկական տարիներից փոքրիկ Արտիկը, ինչպէս մտերմաբար անուանում էին մտերիմների շրջանում, աչքի էր ընկնում իր աշխուժութեամբ. իր ուժերով փոքրիկ գրքոյկներ էր կազմում, խմբագրում, ձեւաւորում, «հրատարակում»: 1907 թ., երբ ընդամէնը 13 տարեկան էր, Դ. Մամին-Սիբիրեակի «Քաջ նապաստակը» փոխադրում է հայերէնի եւ տպագրում «Հասկեր»ում: Դետում բեմադրուել է նրա՝ պիէսի վերածած «Գիքորը», որի ժամանակ խաղացել է Համբոյի դերը եղբօր՝ Համիլիկի հետ: Բեմադրութեանը ներկայ է եղել հայրը:

Արտաւագրի Ներսիսեան դպրոցի դասընկեր, յետագայում բանաստեղծ, դերասան Պահարէն յիշում է ինչպէս էին երկուսով ձեռագիր ամսագիր հրատարակում «Թոթովանք» խորագրով<sup>3</sup>:

Մի առանձին գուրգուրանքով են ողողուած հայ ժողովրդական դերասանուհի Յասմիկի նամակները՝ անսահման հոգատարութիւն, անհանգստութիւն՝ նրա ապագայ ծրագրերի իրականացման համար եւ մեծ հաւատ: Իր բարի խորհուրդներով Արտա-

<sup>3</sup> «Թումանեանը ժամանակակիցների յուշերում», Եր., «Էդիթ Պրինտ», 2009, էջ 676 (Պահարէ. «Թումանեանը սկսնակների բարեկամ»):

ւագրին ներշնչել, զօրավիզ է եղել Արմէն Տիգրանեանի քոյրը՝ Արմենուհին, որին երիտասարդը յաճախ դժգոհում էր գորշ իրականութիւնից, չհասկացուած լինելուց: Իսկ պատասխան նամակներում կարելի է հանդիպել խոստումնալից արուեստագէտի հոգին խաղաղեցնող, պարզ ու գեղեցիկ տողերի. «Ես լաւ, շատ լաւ եմ հասկանում քեզ եւ այն ներքին փոթորիկը, ինչ-որ կատարում է քո ներսը: Աստծոյ տաճար է քո հոգին, նա ծաղկում է անմեղ ծաղիկներով, բայց մարդիկ սառն են խօսում քեզ հետ:

Ոչ որ չկայ, անխ, ոչ որք, որ քեզ մտերմական ձեռքով գրկէր, որ կամացով շնչար «քեզ, իմ մտերիմ, ես հասկանում եմ»<sup>4</sup>:

Համապարումի նմանատիպ պահեր է ապրել Յովհ. Թումանեանը. «Մարդ միշտ ունի մի քնքուշ էակի հետ գեղեցիկ, գեղարուեստական կապերով կապուած լինելու կարօտը, երագային կեանքով երբեմն ապրելու տենչը»<sup>5</sup>:

Արտաւագրի սէրը թատրոնի, դրամատուրգիայի հանդէպ պաշտամունքի էր հասնում, չկար ոչ մի ներկայացում, որ բաց թողնէր: Նրա գրած պիէսներից յիշատակելի են «Ընկերը», «Փանձելի», «Նանէն», որոնց մէջ հերոսները տարբեր ժողովուրդների եւ ժամանակների հոչակաւոր արուեստագէտներ էին՝ Ռաֆայէլ, Ռուբենս, Տիցիան, Վան Դեյկ, Լէօնարդօ դա Վինչի: Պիէսներից «Վան Դեյկը» տպագրուել է «Հասկեր»ում 1911 թ., իսկ «Ռուբենսը»՝ «Պատանի» ավանանիսում եւ 1912 թ. բեմադրուել: Արտաւագրը մեծ սիրահար էր հայ ճարտարապետութեան: Միրում էր ճամբորդել, հետաքրքրում էր ճարտարապետական յուշարձանների, կոթողների, եկեղեցիների պատմութեամբ: Այդ են վկայում բանասէր, հնագէտ, յետագայում Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Յովսէփեանին ուղղուած նամակները, որտեղ խնդրում է իրեն ընդգրկել հնագիտական արշաւախմբում: Եւ շատ չանցած՝ ստա-

<sup>4</sup> «Թումանեանի զուակները. Արտաւագր Թումանեան. նամականի», Գիրք Ա., Եր., «Մուղնի» հրատ., 2013, էջ 69-70:

<sup>5</sup> Թումանեան Յովհ., Ասոյթներ, թեւաւոր խօսքեր, կենսագրական եւ մատենագրական տեղեկութիւններ, Եր., 1969, էջ 114:

նում է այնքան սպասուած նամակը, ուր գիտնականը համաձայնութիւն էր տալիս եւ հիացմունքի խօսքեր ուղղում երիտասարդին. «Յովհաննէս Թումանեանի որդին չէր կարող անտարբեր լինել դէպի անցեալի սրբազան մնացորդները, ի սրտէ ուրախ եմ, ոչ այն պատճառով, որ ինձ օգնել կարող էք, այլ որ Ձեր մէջ այդպիսի սեր եւ ձգտում կայ»<sup>6</sup>:

Արտաւազդին գնահատում ու փոխադարձ մտերմութեամբ վայելում էին նրա բարեկամութիւնը Մ. Սարեանը, Վ. Տէրեանը, Դ. Աղայեանը, Ալ. Շիրվանզադէն, Պ. Մակինցեանը, Ս. Գորոդեցկին, Ռ. Մելիքեանը եւ ուրիշներ:

Յովհ. Թումանեանի աչքից չի վրիպում Արտիկի բնատուր տաղանդը նկարչութեան ասպարէզում: Կերպարուեստի առաջին դասերն Արտաւազդն առել է նկարիչ Եղիշէ Թադէոսեանից: Մեծ դժուարութեամբ գրողը հայթայթում է անհրաժեշտ գումարը եւ որդուն ուղարկում Մոսկուա՝ սովորելու ռուս նկարիչ Կելինի արուեստանոցում: Ակնբախ է Արտաւազդի ուրախութիւնն այս առիթով. «Վերջապէս ուշքի եկայ երազած քաղաքի երազներից եւ քեզ գրում եմ առաջին նամակս: Չեմ կարծում, մի այլ քաղաքում էսքան լաւ տեղատրուելի, էսքան լաւ զգալ, ինչպէս Մոսկուայում: Չնայած դեռ չեմ մտել դպրոց, արուեստագէտների շրջան, թատրոն եւ այլն... բաւականի ունեմ էնպիսի բարեկամներ, որպիսին են Վահանն ու Մակինցեանը...»<sup>7</sup>:

Արտաւազդին Մոսկուայում իր խորհուրդներով, մշտապէս օգնելու պատրաստականութեամբ սատարում էր Մ. Սարեանը, գնահատում նրա բնատուր տաղանդը, ուսումնատենչ ոգին: Այս մտերմութեան արդիւնքում, ինչպէս նաեւ գրող ու նկարիչ Մ. Վոլոշինի՝ Մ. Սարեանին նուիրուած յօդուածի անմիջական տպատրութեան տակ, Արտաւազդը գրում է մի արժէքատու ուսումնասիրութիւն՝ «Մարտիրոս Սարեան» խորագրով<sup>8</sup>, որը յետագայում բարձր

<sup>6</sup> «Թումանեանի գաւակները. Արտաւազդ Թումանեան. նամականի», Գիրք Ա., էջ 60:

<sup>7</sup> *Նոյն տեղում*, էջ 81:

<sup>8</sup> «Գրական թերթ», Եր., 1980, Մայիսի 23:

գնահատուեց Էդուարդ Ջրբաշեանի եւ կերպարուեստագէտ Մանիա Ղազարեանի կողմից:

Երիտասարդի համար 1913 – 1914 թթ. շատ երջանիկ տարիներ էին: Բայց սկսում է Առաջին համաշխարհային պատերազմը: Վերադառնալով Թիֆլիս՝ նա զօրակոչուում է բանակ եւ պարտադիր զինուորական ծառայութիւնից յետոյ կամաւոր մնում աշխատելու «Միջազգային Կարմիր Խաչի Համառուսական Քաղաքների Միութեան» կովկասեան կոմիտէում: Արտաւազդը լուրջ աշխատանքային գործունէութիւն է ծաւալում «Հայ Երիտասարդների Կոմիտէ»ում (1915 – 1918 թթ.): 1916 թ. նշանակում է Վանի լիազօր ներկայացուցիչ:

1917 թ. Վանում եղած ժամանակ Արտիկը մասնակցել է զինականներ Ն. Ադոնցի եւ Ա. Քալանթարի հնագիտական արշաւախմբի աշխատանքներին: Ուսումնասիրելով Ադթամարի ձեռագրերը՝ յայտնաբերել է Գրիգորիս Գեղեցիկի տաղերը, արտագրել՝ փրկելով դրանք ոչնչացումից:

«Թումանեանի գաւակները. Արտաւազդ Թումանեան. նամականի» գրքում մեծ տեղ է յատկացուած ռազմաճակատից նրա ուղարկած նամակներին, որոնցում արտացոլուած են 20–րդ դարասկզբին Արեւմտեան Հայաստանում հայ ժողովրդին բաժին հասած ողբերգական դէպքերը: Նա սրտացաւութեամբ կատարում է իրեն վստահուած գործը, հայ գաղթականներին ապահովում սննդով, բուժօգնութեամբ, բացում ժամանակաւոր կացարաններ, հիւանդանոցներ: Անգամ մարտի դաշտում անտարբեր չէ հայրենի բնաշխարհի հանդէպ, քրոջը՝ Նուարդին հասցէագրած մի նամակում գրում է. «Ապա թէ իմանաս ինչ գեղեցիկ, սրբազան վայրերով եմ անցել, բաւական է տամ Աւարայրի դաշտի անունը... ինչ սքանչելի է... էս դաշտերով, ճամբաներով ինչ թագաւորներ, իշխաններ, ինչ դէմքեր են անցել: Մնացել եմ զարմացած Ռաֆֆու վրայ, թէ ինչ վարպետօրէն, ճիշդ եւ գեղեցիկ է նկարագրել ամէն մանրամասնութիւն, ինչ թախճոտ աչքեր

է ունեցել էր «անհանգիստ հոգին», ինչ զգացմունքներով է փայփայել ամէն մի գրելիք տողը...»<sup>9</sup>:

Նամակների մէջ առանձնանում են Արտիկի կեանքի անյայտ էջերը բացայայտող, պատանեկան սիրով գրուած տողերը՝ ուղղուած անգլուիի Էլիզաբէթ Արմսթրոնգին: Վերջինս աշխատանքի բերումով Միջագային Կարմիր Խաչի գթութեան քոյր, այդ օրերին ծանօթանում է Արտաւազդի հետ եւ նրան սովորեցնում անգլերէն: Թերթում ես նամակները, որոնք պատմում են մաքուր ու անքիծ սիրոյ, անկատար երազների մասին, իսկ բանաստեղծական տողերը սիրոյ ինքնատիպ խոստովանութեան դրսեւորումներ են.

*Քո ձայնը, ասես հեքեաթում լինի,  
Երբ լուռ է ամէնը, ամէնը ի քուն:  
Իտաղաղ գիշերը, դիւթական... գինի...  
Դու օրսար աղջիկ իմ հայրենիքում:  
Երկուսս էլ լոռում ենք, օրսար լեզուներ,  
Ժպիւրով ենք խօսում, լռութեամբ սիրում,  
Ա՛խ, ամէն մէկս որքան սէր ունէր  
Իրար պարմելու, իրար ասելու»<sup>10</sup>:*

Առանց յուզմունքի անկարելի է կարդալ Արտաւազդի Վանից ուղարկուած նամակները հարազատներին, ուր, թում է, կանխազգում էր իրեն մօտեցող մահուան վտանգը:

Եւ իսկապէս. Վանի երկրորդ նահանջի ժամանակ զոհում է: Նրա մահը Յովի. Թումանեանի անձնական մեծագոյն ողբերգութիւնն էր, որից այդպէս էլ ուշքի չեկաւ:

Սերգէյ Գորոդեցկին՝ Յովի. Թումանեանի ընտանիքի հաւատարիմ բարեկամն ու Արտաւազդի ընկերը, անհուն ցաւով գրել է. «Ինչքան շատ ստեղծագործական ուժեր խորտակուեցին նրա

<sup>9</sup> «Թումանեանի զօրութիւնը. Արտաւազդ Թումանեան. Նամակներ», Գիրք Ա., էջ 159:  
<sup>10</sup> **Նոյն տեղում** / յատկուած, բանաստեղծութիւններ նուիրուած Է. Արմսթրոնգին, էջ 263:

մէջ, ափսոս նրա սիրտը, որ լեցուն էր թումանեանական ջերմ արեամբ: Արտաւազդին ծաղկում էր սպասում...»<sup>11</sup>: Իսկ սգակիր հօրն ուղղուած տողերում կարդում ենք. «Իմ վիշտը թում է փոքրիկ մի մթնշաղ Ձեր վշտի ահռելի գիշերի հանդէպ... Ձեզ հետ միասին նայում եմ դատարկուած աշխարհին ու սպասում այն պահին, երբ մեր հայեացքը կը դարձնենք դէպի յաւերժական աստղեր, որտեղ այժմ գտնուում է Արտիկի հոգին»<sup>12</sup>:

Շիրվանզադէն իր «Բանաստեղծն ու հայրը» յօդուածում (1933) յիշում է Թումանեանի հոգեցունց խօսքերը՝ ասուած իր յիսուն ամեակի օրը. «Բայց հաւատա, այսօր ես իմ բոլոր ստեղծագործութիւնները կրակին կը նուիրէի, միայն թէ վերադարձնէին ինձ իմ կորած որդուն...»

Նա չէր դադարում եւ մինչեւ մահուան ժամը չդադարեց ողբալ իր այն ամէնից սիրուած որդուն, որ իմպերիալիստական պատերազմի անմեղ զոհերից մէկը դարձաւ, եւ որին նա փայփայել էր իր զգայուն հոգու ամբողջ զօրութեամբ»<sup>13</sup>:

Տարիներ յետոյ Էդ. Ջրբաշեանը «Պօէտի որդին» յօդուածում պէտք է գրէր. «Մեծ ընտանիքից առաջինը զոհուեց Արտաւազդը, իր հետ տանելով տաղանդաւոր արուեստագէտի խորտակուած ապագան, Թումանեանի կեանքի վերջին տարիները լցնելով անփարատելի վշտով»<sup>14</sup>:

Արտաւազդ Թումանեանի թողած թանկագին մասունքները՝ գրական երկեր, կտաններ, արժէքաւոր ուսումնասիրութիւններ, վկայում են եւ հաստատում պօէտի տողերը՝ «Ինչքան ծաղիկ պիտի բուսներ, որ չըբուսաւ էս հողին»<sup>15</sup>, եթէ ճակատագիրն անողորջ չգտնուէր իսկատիպ արուեստագէտի հանդէպ:

<sup>11</sup> **Նոյն տեղում**, էջ 15:  
<sup>12</sup> **Գորոդեցկի Ա.**, Հայաստանի եւ հայ կոլտուրայի մասին, Եր., 1980, էջ 282-286:  
<sup>13</sup> **Շախկեան Գ.**, Թումանեանի ընտանեկան աշխարհը, Եր., 2011, էջ 132:  
<sup>14</sup> «**Գարուն**», Եր., 1977, թիւ 9, էջ 45-47:  
<sup>15</sup> **Թումանեան Յովի.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր երկրորդ / քառեակներ, բալլադաներ, թարգմանութիւններ, Եր., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի ան. Գրականութեան Ինստիտուտ, 2018, էջ 59:

SUMMARY  
TUMANYAN'S CHILDREN: ARTAVAZD

ARMENUHI MURADYAN

Among Tumanyan's children Artavazd was the best like a talented artist with a good talent of writing and painting. His tragic death was irreversible loss for Tumanyan.

РЕЗЮМЕ  
ДЕТИ ТУМАНЯНА: АРТАВАЗД

АРМЕНУИ МУРАДЯН

Среди детей Туманяна Артавазд отличается с большим талантом к письму и живописи как талантливый художник. Его трагическая смерть стала необратимой потерей для Туманяна.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ՝  
ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ  
ՈՍԿԷ ՕՂԱԿ

ԿԱՐԻՆԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Վրաստանի Մշակույթի, Կրթության, Գիտության եւ  
Սպորտի նախարարության աշխատակից

**Բանալի բառեր՝** Յովհաննես Թումանյան, Գրիգոլ Ռոբաքիձե, Տիցիան Տաբիձե, Իոսեփ Գրիշաշվիլի, Թիֆլիս, Հայաստան, Վրաստան, վրաց ժողովուրդ, բարեկամության ջատագով, հայ-վրացական գրական կապեր, վրացական մամուլ:

**Key words:** Hovhannes Tumanyan, Grigol Robakidze, Titsian Tabidze, Ioseb Grishashvili, Tiflis, Armenia, Georgia, Georgian people, friendship preacher, Armenian-Georgian literary relations, Georgian print media.

**Ключевые слова:** Ованес Туманян, Григол Робакидзе, Тициан Табидзе, Иосеб Гришашвили, Тифлис, Армения, Грузия, грузинский народ, проповедник дружбы, армяно-грузинские литературные связи, грузинская пресса.

Հայ-վրացական գրական-թարգմանական շփումները սկսուել են 5-րդ դարից, երբ գրեթէ միաժամանակ հիմք է դրուել երկու ժողովուրդների գրատու մշակույթներին: Վաղ եւ ուշ միջնադարից մեզ են հասել հայերէնից վրացերէն եւ վրացերէնից հայերէն թարգմանուած վարքագրական, քերականական, պատմական ու գրական տասնեակ յուշարձաններ: Սակայն երկու ժողովուրդների գրական եւ թարգմանական կապերը բոռն կերպով զարգացել են 19-րդ դարում: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Թիֆլիսն արեւելահայ հոգեւոր-մշակութային խոշոր կենտրոնի էր վերածուել: Նորովի էր կարեւորում գրականու-

թեան, թարգմանութեան, երաժշտական երեկոների, հայ-վրացական գրական առընչութիւնների, գիտական ուսումնասիրութիւնների նշանակութիւնը: Մեծ էր յատկապէս մամուլի դերը, որի էջերում լուսաբանում էին երկու ժողովուրդների թէ՛ մշակութային, թէ՛ գրական իրադարձութիւնները: Այդպիսի հրատարակութիւններից էին «Կոունկ հայոց աշխարհի» ամսագիրը, «Մշակ», «Արձագանգ», «Իվերիա», «Դրոներա» («Ժամանակ»), «Կվալի» («Հետք»), «Գրականութիւն եւ կեանք», «Մեղու Հաստանի» թերթերը, ատլի ուշ՝ «Գրական հանդէս» ամսագիրը, «Խորհրդային Վրաստան» (այժմ՝ «Վրաստան»), «Լիտերատուրուլի Մաքարթվելո» («Գրական Վրաստան»), «Կոմունիստ» թերթերը, «Կամուրջ» տարեգիրքը, որոնցից այսօր շարունակում են հրատարակուել միայն «Վրաստան»ը եւ «Կամուրջ»ը:

Մշակութային յարաբերութիւնների զարգացման առումով պակաս կարեւոր չէր հայ գրողներ ու մշակոյթի գործիչներ Խ. Արովեանի, Յովհ. Թումանեանի, Ա. Իսահակեանի, Դ. Դեմիրճեանի, Ե. Չարենցի եւ վրաց գրողներ Ի. Գրիշաշվիլու, Կ. Գամսախորդիայի, Տ. Տաբիձէի, Գ. Լէօնիձէի, Գ. Տաբիձէի, Ի. Նոնեշվիլու եւ այլոց մտերմութիւնն ու ստեղծագործական սերտ փոխգործակցութիւնը:

Ժամանակի հայ-վրաց գրական փոխյարաբերութիւնների հոգեւոր միասնութեան «լուսաւոր բարձունքը», սակայն, մեր մեծագոյն բանաստեղծ Յովհաննէս Թումանեանն էր:

Շուրջ 40 տարի Յովհ. Թումանեանի բեղմնաւոր ստեղծագործական, հասարակական աշխատանքն ընթացել է Թիֆլիսում: Բանաստեղծը յաճախ է անդրադարձել հոգեհարազատ քաղաքին («Սայեաթ-Նովայի երգերի բովանդակութիւնը», «Վրաց բանաստեղծութիւնը» յոդուածներ, «Սայեաթ-Նովան – Դաւիթ եպիսկոպոս եւ առաջնորդ Հաղպատայ թեմի» զեկուցում) եւ միշտ էլ հիացմունքով խօսել այդ ինքնատիպ բնակավայրի մասին: «Երկու մեծ թիֆլիսեցիներ» յոդուածում հանդիպում ենք հե-

տեւեալ տողերին. «Էն մի առանձին, իւրատեսակ աշխարհք էր, որի մէջ եկել միացել էին կովկասեան ժողովուրդները, ամէնքն իրենց առանձնայատուկ կեանքով ու երանգով եւ յօրինել էին ազգերի մի վերին աստիճանի գրաւիչ ու հետաքրքիր խառնուրդ ու կեանք: Եւ որովհետեւ էդ կեանքին տօն տուողը վրացական գուարթ ոգին էր, էդ պատճառով էլ հին Թիֆլիսը խորթ տարրերի էթնօգրաֆիկ մի ժողովածու չէր հանդիսանում, այլ մի ուրախ հարսանքատուն, ուր հրաւիրուած էին Կովկասի բոլոր ազգերն ու ցեղերը քէֆ քաշելու»<sup>1</sup>:

Վրաստանը Յովհ. Թումանեանի երկրորդ հայրենիքը դարձաւ, որին նա նուիրուեց սիրառատ սրտի ողջ ուժով: Նա ստեղծագործական ժառանգութեան մէջ ուրոյն տեղ յատկացրեց Վրաստանի թեմային: Ջերմ սիրոյ արտայայտութիւն են «Հաշտութիւն» (1893), «Ն. Բարաթաշվիլու դամբանի վերայ» (1893), «Վրաստանի մասին» (1916), «Վրաստանի պօետներին» (1919), «Վրաստանի ոգին» (1919), «Նուէր Վրաստանի բանաստեղծներին» (1919) եւ այլ գործեր:

Մ. Փալիաշվիլուն ուղղուած նամակում Յովհ. Թումանեանը գրում է. «Հաւատացնում եմ Ձեզ, որ ինչքան թանկ են ինձ համար Վրաստանը եւ սքանչելի վրացական հոգին, նոյնքան թանկ են այն մարդիկ, որոնք հանդիսանում են այդ հոգու կրողներն ու մեկնաբանները այդ հոգու»<sup>2</sup>:

Խորն ու ամուր էր բանաստեղծի կապը վրաց ժողովրդի հետ եւ անչափ մեծ՝ նրա սէրն ու յարգանքը վրացիների հանդէպ: «Վրացին արդէն պօետ է, իսկ վրացական պօետը՝ կրկնակի պօետ»<sup>3</sup>,– նկատում է նա:

<sup>1</sup> **Թումանեան Յովհ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր եօթերորդ / քննադատութիւն եւ հրապարակախօսութիւն. 1913-1922, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 1995, էջ 27:

<sup>2</sup> **Նոյնը**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր տասներորդ, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1999, էջ 700:

<sup>3</sup> **Նոյն տեղում**, էջ 701:



19-րդ դարի 80-ականների վերջից սկսում է Յովհ. Թումանյանի լայն հասարակական գործունեությունը: Նա, ինչպես գեղարուեստական գործերում, այնպես էլ հրապարակախօսությանը բազմիցս անդրադարձել է հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամության ամրապնդման խնդրին: Մեծ մարդասերը երկիդաժութեամբ էր վերաբերում ու անձնուրացաբար պաշտպանում երկու ժողովուրդների միջեւ եղբայրական յարաբերությունները: Բանաստեղծը գտնում էր, որ նոր ժամանակներում էլ չպարտուելու համար անհրաժեշտ է միասնական լինել, որ երկու էթնոսների բարօրության կարեւոր պայմանը հաշտությունն է... «Այստեղ տուր ձեռքդ, մօտեցիր ընկեր, / Մի նայիր ետեւ, ինչ է կատարում... / Մենք հո եղբայր ենք դարերից ի վեր, / Մեզ հո միեւնոյն կրակն է այրում»<sup>4</sup>:

Յովհ. Թումանյանն իր հրապարակախօսության հիմքում դրել է ազգերի փոխճանաչման հարցը, ուր կարեւոր է միմեանց մշակոյթներին հաղորդակից լինելը՝ թարգմանության, դասախօսությունների եւ այլ ճանապարհներով: Նա անձամբ ուսումնասիրել է վրաց գրականությունն ու արուեստը եւ իր գիտելիքներն ի սպաս դրել վրաց մշակոյթի քարոզչությանը: Այդ նպատակով նա Հայ Գրողների Ընկերության միջոցով կազմակերպում էր վրաց գրականութեանը նուիրուած երեկոյթներ, ուր հանդէս էր գալիս զեկուցումներով:

Խորը հայրենասիրութիւնը չխանգարեց Յովհ. Թումանյանին նոյն անկեղծութեամբ սիրել նաեւ Վրաց աշխարհը: Մեծ մարդասերը վստահեցնում է. «...Հաւատացած եղէք, որ ամենալաւ վրացու հետ ես կը մրցեմ դէպի Վրաստանը տաճած իմ անկեղծ ու խոր սիրով»<sup>5</sup>: Նա յատկապէս կարեւորել է գրականութեան դերը՝

<sup>4</sup> **Նոյնը**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր առաջին / բանաստեղծութիւններ, Եր., << ԳԱԱ Մ. Արեւելանի ան. Գրականութեան Ինստիտուտ, 2018, էջ 478:

<sup>5</sup> “**Борьба**”, Тифлис, 29 Ноября, 1919.

որպէս ժողովուրդների միջեւ կապի «ամենավսեմ» միջոցներից մէկը: Իր յարկի տակ յաճախ է հիւրընկալել վրաց գրչակիցներին, մտորել գրականութեան, արուեստի, Կովկասի ժողովուրդների ճակատագրի շուրջ: Ուշադրութեամբ հետեւել է վրաց մշակոյթի զարգացմանը եւ ակտիւօրէն մասնակցել բոլոր յիշարժան միջոցառումներին ու սօսակատարութիւններին, ձգտել է խորամուխ լինել վրաց ժողովրդի կեանքի բոլոր մանրամասների մէջ: Այս առումով ուշագրաւ է հետեւեալ փաստը. 1893-ի Ապրիլի 25-ին վրաց հասարակայնութիւնը Գանձակից Թիֆլիս էր տեղափոխում բանաստեղծ Նիկոլոզ Բարաթաշվիլու աճիւնը: Ի. Ճավճավաճէի, Ա. Ծերեթելիի, Գ. Ծերեթելիի եւ ուրիշների հետ եկել էր իր յարգանքը մատուցելու Յովհաննէս Թումանյանը, որտեղ յուզիչ խօսք է ասում: Այսպէս սկսեց ճանաչել Վրաստանը իր նոր բարեկամին:

Բացի գրական երեկոյթներից, անձնական կապերից ու ծանօթութիւններից՝ Յովհ. Թումանյանը մեծ կարեւորութիւն էր տալիս թարգմանական գործին: Նա գտնում էր, որ այդ ճանապարհով ժողովուրդները կարող են աւելի մօտիկից իրար ճանաչել: Ճիշդ է, Թումանյանը վրաց գրականութիւնից շատ քիչ է թարգմանել, յայտնի են 1907 թ. Ի. Ճավճավաճէի մահուան առիթով նրա «Գարուն», «Էլեգիա» բանաստեղծութիւնների հիանալի թարգմանութիւնները, սակայն հայ գրողներին խրախուսել է զբաղուել թարգմանութեամբ:

Մեծ արուեստագէտը շատ բարձր է գնահատել այն գրողներին, որոնք իրենց ստեղծագործութեամբ նպաստել են հայ եւ վրաց ժողովուրդների մերձեցմանը: Այս իմաստով բացառիկ նշանակութիւն է տուել Սայեաթ-Նովային եւ մեծապէս օժանդակել է Ի. Գրիշաշվիլու «Սայեաթ-Նովա» մենագրութեան ու վրացերէն երգերի գրքոյկի հրատարակմանը:

Վրաց հասարակութեան հետաքրքրութիւնը Յովհ. Թումանյանի երկերի հանդէպ սկսում է 90-ականներից: Այն պայմանաւորուած էր գրողի ստեղծագործական բազմազանութեամբ

ու մեծ մարդասիրութեամբ: 1908 թ. «Նակադուլի» («Առուակ») մանկական ամսագրում տպագրուել է «Սուտասանը», իսկ 1911-ին «Ձեչիլ» («Արտ») ամսագրում՝ «Բարեկենդանը» (երկուսի թարգմանիչն էլ Ղ. Կարապետեանն էր):

Յովհ. Թումանեանին վրացերէնով թարգմանելու գործում մեծ ասանդ ունի Ի. Գրիշաշվիլին: Նա 1924 թ. Թբիլիսիում հրատարակել է բանաստեղծի ստեղծագործությունների հատընտիրը:

1950-ական թթ. Յովհ. Թումանեանի կեանքի ու գործունեության մասին ծառայուն յօդուածով հանդէս է եկել Ալ. Բարամիձէն:

Վրաց հանճարեղ քնարերգու Տիցիան Տաքիձէն Յովհ. Թումանեանին նուիրուած «Պօէտների երագանքը» բանաստեղծութեան մէջ նրան համարել է հարեան ժողովուրդների եղբայրական միասնութիւնը, ազնիւ ձգտումները մարմնաւորող. «Յովհաննէս Թումանեանը մերօրեայ իրականութեան մէջ փայլուն անձնատրութիւն էր: Այդ անձնատրութեան մէջ մարդկային մեծ հմայք կար, որով հրապուրում էր եւ յաւերժ նրա բարեկամն էր դառնում իւրաքանչիւր ոք, ում հետ նա գրուցում էր»<sup>6</sup>, – գրում է նա:

Յովհ. Թումանեանի մահը խորապէս սգացել է վրաց ժողովուրդը: Վրաց գործիչներն ու ստեղծագործողները յարգանքի բազմաթիւ խօսքեր են յղել ու ներբողներ հիսել՝ Ս. Փիրցխալավայի բնորոշմամբ՝ «հայ ժողովրդի վեհանձնագոյն զաւակի եւ վրաց ժողովրդի ամենասիրելի բարեկամի» մահուան կապակցութեամբ: Մէջբերենք վրաց անուանի գրող, դրամատուրգ, արուեստաբան Գրիգոլ Ռոբաքիձէի «Ռուրիկոնի» շաբաթաթերթի 1923 թ. Ապրիլի 8-ի համարում գետեղուած «Յովհաննէս լուսեղէն» վերնագրով յուշերից մի հատուած. «...Շատ մեծ է մեր վիշտը, որովհետեւ Յովհաննէսը Մարդ էր: Յովհաննէսը Բանաստեղծ էր: Յովհաննէսը Բարեկամ էր: Եւ ամէն ինչում կատարելապէս լուսեղէն...»:

<sup>6</sup> «Ուղեցոյց աստղը» / վրաց մտաւորականները Յովհաննէս Թումանեանի մասին, կազմեց, վրացերէնից թարգմանեց եւ ծանօթագրեց Հրաչեայ Բայրամեանը, Եր., 1999, էջ 59:

Տիցիան Տաքիձէի այրին՝ Նինօ Տաքիձէն բանաստեղծի մահուան առիթով փաստում է. «...Յուղարկատրութիւնը վերածուեց անդրկովկասեան ժողովուրդների եղբայրութեան հսկայական ցոյցի: Եւ չեմ յիշում, որ այլազգի բանաստեղծները այդպիսի կսկիծով որեւէ մէկին վերջին հանգրուան ուղեկցէին»<sup>7</sup>:

Մեծ պօէտին, մարդկային լաւագոյն յատկանիշներով օժտուած հայրենասէր քաղաքացուն, իր կտակի համաձայն, յուղարկատրեցին այն քաղաքում, որի հետ կապուած էր հոգու հազար ու մի թելերով: Եւ, յիրաւի, այդ Լուսեղէն անհատի մահուամբ չսպառուեց այն մեծ սէրը, որ դրսևորում էր նա սեփական ժողովրդի ու եղբայր վրաց ազգի հանդէպ: Այսօր էլ Խոջիվանքի բարձունքից նա շարունակում է անսահման լոյս ու սէր սփռել իր երկու հայրենիքների վրայ:

## SUMMARY HOVHANNES TUMANYAN - THE GOLDEN RING OF ARMENIAN-GEORGIAN FRIENDSHIP

KARINE MANUKYAN

The paper “Hovhannes Tumanyan - the Golden Ring of Armenian-Georgian Friendship” is a story about the activity of Hovhannes Tumanyan - the great Armenian poet, writer, publicist, national public figure in the field of strengthening the Armenian-Georgian friendship and the development of relations in literature.

The poet of genius spent most of his life in Georgia, namely in Tbilisi. The pan-Armenian poet showed unfailing love towards Georgia, the Georgian people and its culture. His literary and social activities significantly contributed to the strengthening of centuries-old friendship and the convergence of literature between two nations.

<sup>7</sup> Նոյն տեղում, էջ 67:

The paper presents a high assessment of Hovhannes Tumanyan as a person, public and literary figure, a true friend of the Georgian people by the outstanding Georgian literary figures.

## РЕЗЮМЕ

### “ОВАНЕС ТУМАНЯН – ЗОЛОТОЕ КОЛЬЦО АРМЯНО-ГРУЗИНСКОЙ ДРУЖБЫ”

*КАРИНЕ МАНУКЯН*

Статья “Ованес Туманян – золотое кольцо армяно-грузинской дружбы” представляет собой повествование о деятельности великого армянского поэта, писателя, публициста, национального общественного деятеля Ованеса Туманяна в области укрепления армяно-грузинской дружбы и развития взаимоотношений в литературном направлении.

Гениальный поэт почти большую часть своей жизни провел в Грузии, особенно в Тбилиси. Всеармянский поэт проявлял безграничную любовь по отношению к Грузии, грузинскому народу и его культуре. Своей литературно-общественной деятельностью значительно содействовал укреплению многовековой дружбы и сближению литературы двух народов.

В статье излагается высокая оценка выдающихся грузинских литературных деятелей Ованеса Туманяна как личности, общественного и литературного деятеля, верного друга грузинского народа.

## «ԱՆՅԱՅՏ»ԻՑ ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ («ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ»)

*բ. գ. թ., դոցենտ ԲՆԱՐԻԿ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ  
Խ. Արովեանի ան. ՀՊՄՀ Վ. Պարպիզունու ան. Հայ նոր և նորագոյն  
գրականութեան և նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոն  
«Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնի մեթոդիստ*

**Բանալի բառեր՝** Յովհաննէս Թումանեան, «Հայրենիքիս հետ», բանաստեղծութիւն, երկխօսութիւն, «Անյայտ», փիլիսոփայական խոսք, ողբերգական ճակատագիր, 20-րդ դարասկզբի բանաստեղծութիւն, միջտեքստայնութիւն, նախորդ շրջանի բանաստեղծներ, յաջորդներ:

**Key words:** Hovhannes Tumanyan, “With My Homeland”, poem, dialogue, “Unknown”, philosophical thought, tragic fate, the poetry of 20<sup>th</sup> century, intertextuality, poets of the previous period, descendants.

**Ключевые слова:** Ованнес Туманян, “С моей Родиной”, стихотворение, диалог, “Неизвестный”, философский замысел, трагическая судьба, интертекстуальность, поэты прошлой эпохи, последователи.

Հայրենիքի մասին գրելը գայթակղութիւն ու միաժամանակ փորձաքար է հին ու նոր բանաստեղծների համար, յաճախ պատրաստի ձեւակերպումներով նիւթ, որը, սակայն, կարծում ենք, ամէնից դժուարյաղթահարելի տեղամասերից մէկն է: Նիւթի «դիմադրութիւնն» ակնբախ է ճակատագրական պահերին, ինչը երբեմն տարակուսանքի առջեւ է բերում հենց իրենց՝ արուեստագէտներին: Այս առումով թերեւս ամէնից բնորոշը անցեալ դարի 10-ական թուականներն էին, երբ հայկական տեսլականը որոնելու ելաւ գրական սերուցքը՝ Տէրեան, Վարուժան, Սիամանթո, Ռ. Սեւակ, Չարենց:

Այս շարակարգութեան մէջ առաջիններից՝ Ամենայն Հայոց Բանաստեղծը: Այդ գերլարումի արդիւնքում ծնունց նրա «Հայրենիքիս հետ» հանճարեղ բանաստեղծութիւնն ու ամբողջացաւ համանուն քերթողագիրքը: Ուշագրաւն այստեղ խորագրի ընտրութիւնն էր, որը ուղենշային պիտի լինի մեզ համար բանաստեղծի ստեղծագործական յանճնառութիւնը հասկանալու տեսակէտից: Փոքրիկ ակնարկն անգամ գրողի՝ ժողովածուներ վերնագրելու աւանդոյթին (կարծես առանձնակի նախանձախնդրութիւն չի ցուցաբերում այս հարցում. նրա գրքերը կոչում էին «Բանաստեղծութիւններ» կամ «Դաշնակներ» եւ ներառում էին նաեւ մեծ կտաւի ստեղծագործութիւններ) ցոյց է տալիս բանաստեղծի յաւակնոտ մօտեցումը:

1916-ին, անմիջապէս աղէտին յաջորդած տարում լոյս տեսած «Հայրենիքիս հետ» ժողովածուն հանրագումարն է Յովհ. Թումանեանի՝ ազգային նիւթին նուիրուած շուրջ երեք տասնեակ տարիների վրայ ձգուող ստեղծագործական աշխատանքի՝ «Մի հառաչանք»ից (1894) մինչեւ «Հոգեհանգիստ» ու «Հայրենիքիս հետ» (1915), որոնցից վերջինի քննութեանն էլ նուիրուած է յօդուածը:

Մէկ գործի շուրջ վերլուծական աշխատանք կատարելու փորձառութիւնը նոր չէ գրականագիտութեան մէջ. այդպէս վարուել են Նիկոլ Աղբալեանը՝ դիմելով Սայեաթ-Նովայի «Ինչ կ'օսին հեքիմըն, ինչ կ'օսին ջարէն» բանաստեղծութեանը<sup>1</sup>, Յակոբ Օշականը՝ մէկ ամբողջ ուսումնասիրութեան համար քննութեան նիւթ դարձնելով նոյն հեղինակի «Մէկ խօսք ունիմ իլլթիմագով» երկը<sup>2</sup>, Էդուարդ Զրբաշեանը՝ Եղիշէ Չարենցի «Ես իմ

անուշ...»ի մեկնութեան ճանապարհին<sup>3</sup>: Երբեմն մէկ բանաստեղծութիւնը բաւական է՝ ընդհանրացնելու հեղինակի մտասելեռումը:

Յովհ. Թումանեանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծութիւնը<sup>4</sup> հայ գրականութեան պատմութեան նշանակալից երեւոյթներից է, ու թում է, դպրոցական ծանօթութեամբ առանձնակի դժուարութիւն չի ստեղծում մեկնական ճանապարհներին: Թում է՝ ամէն ինչ ափիդ մէջ է. «դրսում» 1915-ն է, եւ ասելիքի գլխաւոր ուղղութիւնը այստեղից պիտի ծաւալուի: Իրականութիւնն այն է, որ պարզ, առաջին հայեացքից թաքնախօսութիւն չպարունակող, վերջապէս էպիքական հանդարտութեամբ աչքի ընկնող տողերում մտքի բովանդակային շերտը տրում է զարմանալի գերխտացումով, որի փորձառութիւնը թէ՛ բանաստեղծի, թէ՛ ընթերցողի համար գալիս է դեռեւս դարասկզբին իբրեւ «Հին կոիւր» պօէմի երկրորդ մասի «Նախերգանք» յղացուած «Հայոց լեռներում» բանաստեղծութիւնից, թէպէտ ոչ նոյն ուժականութեամբ, ինչպէս «Հայրենիքիս հետ» քերթուածի պարագային է:

Բանաստեղծութեան առաջին իսկ տողերից երեւան է գալիս քերթողի շիտակ երկխօսութիւնը, որտեղ «Անյայտի», «հեռուի» ու «Անհունի» խտացումով (իսկ դրանք ամենատարբեր դրսերումների մէջ կայուն ներկայութիւն են եւ համակարգային բնոյթ ունեն) կարծես փոքր-ինչ «դժգոհութիւն է յայտնում» ազգային նիւթից: Դեռ բանաստեղծութեան գրութիւնից մօտ մէկ տասնամեակ առաջ է նա փորձել բացատրել այս հասկացութիւնների ծաւալումները իր տեսաբանական հայեացքի սահմաններում. «Այդ անյայտը, կամ անելի ճիշդ՝ իմ անյայտը, գուցէ հենց

<sup>1</sup> Տեն՝ **Աղբալեան Ն.**, «Սայեաթ-Նովայի սերը» // «Ազդարար» / շաբաթաթերթ, Պէրոյթ, 1944, Բ. տարի, 11 Մարտ, Շաբաթ, թիւ 71 եւ 18 Մարտ, Շաբաթ, թիւ 72:

<sup>2</sup> Տեն՝ **Օշական Յ.**, Երբ հիները կը կարդանք, Պէրոյթ, տպ. «Ալթափրէս», 1983, էջ 43-124:

<sup>3</sup> Տեն՝ **Զրբաշեան Էդ.**, Չորս գագաթ / Թումանեան, Իսահակեան, Տէրեան, Չարենց, Եր., «Սովետական գրող», 1982, էջ 411-463 («Տասնվեց տող» յօդուածը):

<sup>4</sup> **Թումանեան Յովհ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր առաջին / բանաստեղծութիւններ, Եր., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի ան. Գրականութեան Ինստիտուտ, 2018, էջ 288-289:

այն «Վերն է», որ ես մեծատառով յիշատակել եմ «Ընկերիս» ոտանատրի մէջ...: Բայց հենց դա էլ շատ է անորոշ, կամ ինչպէս ոտանատրն ինքն է ասում.

Բայց, անի, նա այնքան, այնքան է հեռու...

Այդ *հեռու*-ին հասնելը կամ այդ խաւարը պարզելը հնարատր է, ի հանրկէ, միայն զարգացումով, այնպիսի զարգացումով, որ ես երբեք ունենալու չեմ եւ միշտ *թափառելու է իմ հոգին*<sup>5</sup> (ընդգծումները հեղինակինն են - Ք. Ա.):

Մի տեսակ հակադրութիւն ենք տեսնում իր՝ «դէպի լաւագոյն աշխարհները ոլիմպիական, վսեմ, արհամարհոտ թոհիքի»<sup>6</sup> ու «կարօտով ամէն անգամ» հայրենիքի թեմային դարձի միջեւ:

Ընդգծենք, որ 10-ականներին նոյն երկուութիւնն էր արտայայտում նաեւ Վահան Տէրեանը Պետրոգրադից Նուարդ Թումանեանին ուղղուած նշանատր նամակում. «...Սկսում եմ գալ այն եզրակացութեան, որ մեր հայրենիքի ցաւը մեզ այնպէս է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդունակ ուրիշ բան հասկանալու կամ անելու: Դա մի հիւանդագին սէր է, դա մի անյաղթելի մոլութիւն է – դրա պրիզմայով է բացում մեր առջեւ աշխարհը – այդ չափով ենք մօտենում մենք ամէն ինչին եւ գուցէ դրա համար անզօր ենք դառնում...»<sup>7</sup>:

Ինչ մնում է Յովհ. Թումանեանին, նա ուզում է իր սիրելի Հայնէի նման իր՝ «բանաստեղծի սիրտը աշխարհի կենտրոն»<sup>8</sup> դարձնել, ինչի հնարատրութիւնը, սակայն, հայրենիքի վիշտը չի տալիս: Միաժամանակ վիշտը չի խանգարում հայրենիքի ցաւերի միջով անցկացնել մարդու ու մարդկայինի իր ըմբռնումը:

<sup>5</sup> **Նոյնը**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր իններորդ / նամակներ. 1885-1904, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 1997, էջ 439:

<sup>6</sup> **Նոյն տեղում**, էջ 289:

<sup>7</sup> **Տէրեան Վ.**, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, Եր., «Սովետական գրող», 1979, էջ 175-176:

<sup>8</sup> **Թումանեան Յովհ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր իններորդ, էջ 289:

Փիլիսոփայական խոհին անմիջապէս յաջորդում է ազգի ներկայ վիճակի քննութիւնը, որն առաջին հերթին կապում է Արեւմտահայաստանի ողբերգական ճակատագրի հետ: Չմոռանանք, այդ շրջանում նա երկու անգամ եղել է այնտեղ, մասնատրաբար Վանում եւ Ալաշկերտում: Ժողովրդական զանգուածների հետ անմիջական շփումներ ունենալով՝ համազգային սարսափների սկանառես բանաստեղծը 1917-ին տպաւորուած խոստովանում է, որ մինչ այդ բաւարար ճանաչողութիւն չի ունեցել «կենդանի Հայաստանի» մասին. «Ես ինչքան քիչ տեղեկութիւն եմ ունեցել էսօրուայ կենդանի Հայաստանից, ես, որ համարում եմ նրան ճանաչողներից մինը, ես, որ միշտ կարծիք եմ յայտնել ու շատ թէ քիչ գործել նրա համար...»<sup>9</sup>:

Չմոռանանք նաեւ, որ 1915-ի ամռանը նա գտնում էր Ս. Էջմիածնում եւ զբաղում էր Մուշից, Ալաշկերտից, Վասպուրականից եկած հայ գաղթականների խնամակալութեամբ:

Իսկ արդէն քննութեան առարկայ «Հայրենիքիս հետ» բանաստեղծութեան մէջ նա դառնում է հենց այդ «կենդանի Հայաստանի» կենդանագրողը: Նրա մղկտացող սիրտը «ստիպուած է» «գիւղերից ու շէներից զարկուած» ու դրա արդիւնքում «գիւղերից ու շէներից զրկուած» հայրենիքի պատկերը տեսնել: Հետաքրքիր կառոյց ունեն նաեւ տներն աւարտող երկտողերը, որոնք թէ՛ կապում են անմիջապէս նախորդող տան մտքի հետ եւ թէ՛ միաժամանակ պատկերային աւարտուն միատրներ են:

Բանաստեղծի «մտքի առջեւով» տողանցում են դարերի մէջ անընդհատ մեզ ոչնչացնել փորձող «անհամար բանակները», որոնք «տրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ»: Տպաւորիչ է պատկերակառուցման համակարգը. կրկնակի ցաւ է ապրում բանաստեղծը, ֆիզիքական տառապանքի կողքին՝

<sup>9</sup> **Նոյնը**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր եօթերորդ / քննադատութիւն եւ հրապարակախօսութիւն. 1913-1922, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 1995, էջ 323-324:

իրեն կեղեքում է անարգանքը, որն արդեն յուշում է արժանապատուության կորուստը<sup>10</sup>, ինչը դարձնում է հայրենիքը «սեռ ու սուգի հովիտ», արեւմտահայ աշխարհի թարգման մէկ այլ հեղինակ՝ Աւետիս Ահարոնեանը կ'ասէր «արցունքի հովիտ» (1907), յատկանշուող «խեղճ ու լալկան երգերով» եւ «հայեացքներով անժայիտ»: Սա այն եզակի դէպքերից է, երբ Յովհ. Թումանեանը պաշտպան է կանգնում ահարոնեանական գեղագիտութեան գնահատութեանը, այն ժամանակ, երբ աջ ու ձախից դատափետում էին վերջինիս:

Դա գրողական բնագոյով զգաց նաեւ Ա. Ահարոնեանը, երբ մի քանի տարի անց փոխադարձեց «Հայրենիքիս համար» յուշագրութիւն-ակնարկի (Բոստոն, 1920)՝ նամակ յիշեցնող «Հայրենիքդ իմ, ներիր ինձ» հատուածով, որտեղ խոշորագոյն պետական գործիչը աչք է քթթում Ամենայն Հայոց Բանաստեղծի տողերին ու սրտայոյզ արձագանգում. «Հաւատա՛մ, Հայրենիք, վիրաւոր ու արիւնաքամ, դու դարձեալ պիտի ապրիս, վասն զի անապատների բոլոր ռոնացող խուժաններն իսկ անգոր են սպանել Լոյսը, որ մի բարի աստուած, մի գթոտ աստուած մի օր քո կարկառուն բազուկների մէջ դրեց, ո՛վ դու Յոյսի Հայրենիք,

<sup>10</sup> Նոյնայանգ պատկերային լուծումով է ներկայանում նաեւ հայրենիքի ու արուեստագէտի յարաբերութիւնը մեկնող եւ անլի վաղ գրուած «Մեր նախորդներին» (1902) բանաստեղծութեան տողը.

*Եւ մենք խորփակուած մեր կեանքի ծէգից,  
Անյոյս ու դալուկ, ճակարներըս ցած...*

(Թումանեան Յովհ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր առաջին, էջ 223): – Ընդգծումը մերն է – Ք. Ա.:

Հենց այդ անարգանքն էր, որ խոցոտում էր Վ. Տէրեանի՝ Երկիր Նաիրիի երգչի սիրտը.

*Ու թող գայ, թէ կայ, անլի չար բոթ,*

*Մեխուրի զոհ-երկրիս անարգուած սրտին* («Իջնում է գիշերն անգութ ու մթին...»):

կամ՝

*Մեր հին հոգին համր ու մոլոր,*

*Ա՛խ, եւ անգժօր, եւ անարգուած...* («Հայրենիքում իմ արնաներկ...»):

(Տէրեան Վ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Եր., «Հայաստան», 1972, էջ 241-242):

Լոյսի Հայրենիք...»<sup>11</sup>: Անվերապահ հաւատարմութիւն թումանեանական պատկերին:

Վերադառնալով թումանեանական պատկերներին՝ արդէն երրորդ տան մէջ նորից յայտնուում է բանաստեղծի լաւատեսական խոհրդ: Նորից իր նախընտրած «հնի ու նորի», «էսի ու էնի» սահմանագծում յայտնուում է հայրենիքի պատկերը, որը նարեկեան շնչով «հառաչանքով սրտի խորքից խօսք է խօսում Աստուծոյ հետ» ու տանջանքների միջից խորհում «խորին խորհուրդ»: Իսկ այդ խորհրդով բացում է այն ճամբան, որը տանելու է ուրիշ ժողովուրդների հետ երկխօսութեան, դառնալու այնպիսի երկիր, որը նաեւ բանաստեղծի ու բոլորիս «հոգու հայրենիքն» է:

Մտորումը շիկացումի է հասնում վերջին՝ չորրորդ տան մէջ: Բանաստեղծը պարզապէս յայտարարում է «հանուր կեանքի արշալոյսի»<sup>12</sup> մասին, որը ամէնից առաջ գեղագիտական հաւատամք է իր համար, որը բացում է 20-րդ դարասկզբի մեր բանաստեղծութեան ըմբռնումը Սիամանթոյից, Ռ. Մեակից, Վարուժանից, Տէրեանից մինչեւ Թումանեան, մինչեւ Չարենց: Պատահական չէ այս համարնագրում 1918-ին, Առաջին աշխարհամարտի աւարտին, բանաստեղծի՝ «Երագի մէջ երջանիկ հաշտ ու խաղաղ մարդկութեան» մաղթանքը: Սա է թումանեանական բանաձեւը, որը նաեւ արուեստագէտի մեծութեան ու բացառիկութեան խորհուրդն է, աշխարհում ամէն բան փիլիսոփայական «բարձրից», «վերին այերից» քննելու ուժը:

Յովհ. Թումանեանի համար ազգահաւաքի, խաղաղ կեցութեան ժամադրավայրը, ի հանրկէ, սրբազան լերան՝ Արարատի լանջն է: Եւ հնչում է այս տան մէջ թերեւս ամէնից կարեւոր պատգամը՝

<sup>11</sup> Ահարոնեան Ա., Երկերի ժողովածու, հ. եօթներորդ, Վենետիկ-Ս. Ղազար, 1948, էջ 366:

<sup>12</sup> Թումանեան Յովհ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր երկրորդ / քառեակներ, բալլադներ, թարգմանութիւններ, Եր., ՀՀ ԳԱԱ Գրականութեան Ինստիտուտ, 2018, էջ 30:

*Ու պօտրներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անէծքով,  
Պիտրի գովենք քո նոր կեանքը նոր երգերով, նոր խօսքով:*

Չափազանց տարողունակ է խօսքի սրութիւնը. մի կողմից այն բանավէճ-երկխօսութիւն է բոլոր այն պօտրների հետ, որոնք եղել են իր «նախորդները», եւ որոնք, չնայած ունեցել են մարդկայնութեան ու սիրոյ մեծ ըմբռնում, այնուամենայնիւ ազգային տառապանքից չեն կարողացել վեր կանգնել եւ պահի ազդեցութեամբ «պղծել են իրենց շուրթերն անէծքով»: Դա վերաբերում է առաջին հերթին Թումանեանի համար ոչ այնքան համակրելի Պետրոս Դուրեանին (յիշենք «Թող անէծք մ'ըլլամ ու կողոզ խրքիմ»<sup>13</sup> տողը), դա վերաբերում է Միքայէլ Նալբանդեանի ուժանշունչ շեշտերին («Արի՛ն ու կրակ թշնամու վերայ / Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին»<sup>14</sup>), «թրքաց մայրերին» արցունք խոստացող Մկրտիչ Պէշկոյաշեանին («Թրքաց մայրեր թող լան, ու դուն / Ուրախ լուրեր տար ի Զէյթուն»<sup>15</sup>)<sup>16</sup>:

Միս կողմից հեղինակը իր դռները կրնկի վրայ բաց է պահում այն յաջորդների համար (իրեն դիտելով միջանկեալ այս

<sup>13</sup> **Դուրեան Պ.**, Երկերի լիակատար ժողովածու երկու հատորով, հ. 1, Եր., ՀՀ ԳԱ հրատ., 1971, էջ 61:

<sup>14</sup> **Նալբանդեան Մ.**, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 1, Եր., ՀՀ ԳԱ հրատ., 1979, էջ 104:

<sup>15</sup> **Պէշկոյաշեան Մ.**, Երկերի լիակատար ժողովածու, Եր., ՀՀ ԳԱ հրատ., 1987, էջ 44:

<sup>16</sup> Այս առիթով յիշենք 1899-ին գրուած «Մեր նախորդ շրջանի բանաստեղծները» յօդուածը, որտեղ բանաստեղծը բերում է այն ոգետրութիւնը, որ ապրել էին այդ արուեստագէտները. «Այդ մեր նոր կեանքի արշալոյսն էր, որի նշոյլները հենց որ սլացան մեր խաւար կեանքում – ազատարար կոչնակի նման Ռուսաստանի հիւսիսային ծայրից լուսեց ազգային վերածնութեանը յառաջընթաց բանաստեղծի ծայրը.

*Յառնջ հայրութիւն, յառնջ ազգութիւն,  
Լուսատր դարուս գաղափարներով:  
(Ս. Շահագիգ)*

Այդ բոլորովին նոր երգ էր, նոր խօսքերով ու եղանակով» (**Թումանեան Յովհ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր վեցերորդ / քննադատութիւն եւ հրապարակախօսութիւն. 1887-1912, Եր., ՀՀ ԳԱ «Գիտութիւն» հրատ., 1994, էջ 122-123):

Մի քանի տարի անց արդէն բոլորովին այլ շեշտ է ստանում բանաստեղծի խօսքը վերը նշուած «Մեր նախորդներին» բանաստեղծութեան մէջ:

երթում), ովքեր պիտի նոր երգեր ու նոր խօսքեր գտնեն հայրենիքը գովերգելու համար, իսկ այդ նոր երգի ճանապարհին ինքն աղօթարարն է, ինչպէս դիպուկ բնորոշում է Ալեքսանդր Խատիսեանին 1919-ի Մարտի 3-ին ուղղուած նամակում, որը մի տեսակ խտացում-ամփոփումն է բանաստեղծի՝ հայրենականի չընդհատող փնտրտութի. «Էս անգամ էլ, առասպելական ֆենիքսի նման, [Հայաստանը] պիտի յառնի իր օճախների մոխիրներից նոր կեանքով ու ատիլի տաղանդատր բանաստեղծների գուարթ երգերով: Եւ եթէ բանաստեղծի աղօթք էք ուզում դուք ինձանից, ապա ես միայն մի աղօթք ունեմ նրա համար, որ նա, հայ ժողովուրդը, կենդանի մնայ ֆիզիքապէս, մնացածը ձեռք կը բերի ինքը. ինքը, որ կանգնած է աշխարհների մէջտեղը, Հայաստանի երկնահաս բարձրաւանդակին, երկնից էսքան մօտիկ, իր խոհուն ճակատը դէմ տուած աշխարհի բոլոր փոթորիկներին՝ պայծառ նայում է դէպի իր մեծ ու լուսատր ապագան»<sup>17</sup>:

Թումանեանագէտ Էդուարդ Զրբաշեանի բնութագրութեամբ՝ «Այս տողերը (վերջին տունը – Ք. Ա.) դարձան հայ ազգային մեծ բանաստեղծի ազնիւ ու պայծառ պատգամը, որը հայրական իմաստութեամբ ու գորովանքով ուղեկցում է հայ գրողների նորանոր սերունդներին»<sup>18</sup>: Եւ այդ «նորերի մէջ»՝ առաջին բնագծերում Եղիշէ Չարենցն<sup>19</sup> ու Պարոյր Սեւակը, Յովհ. Շիրազն ու Զ. Խրախունին:

<sup>17</sup> **Նոյնը.** Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր տասներորդ / նամակներ. 1905-1922, Եր., ՀՀ ԳԱ «Գիտութիւն» հրատ., 1999, էջ 659-660:

<sup>18</sup> **Զրբաշեան Էդ.**, Չորս գագաթ, էջ 43:

<sup>19</sup> Կարծում ենք, բոլորովին էլ անհող չէ Ե. Չարենցի «...Թումանեանն է անհաս Արարատը մեր նոր քերթութեան» հաւաստումը (**Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., ՀՀ ԳԱ հրատ., 1968, էջ 417), որտեղ պատկերն անմիջապէս տանում է «երկնահաս բարձունքի» թումանեանական ձեւակերպմանը: Նոյնը կարելի է ասել նաեւ «Ես իմ անուշ...»ի «Ինչպէս անհաս փառքի ճամբայ՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում» տողի մասին (**Նոյնը.** Երկերի ժողովածու, հ. 1, Եր., ՀՀ ԳԱ հրատ., 1962, էջ 247), որը յետագայում պիտի անցնէր պոլսահայ նորագոյն շրջանի բանաստեղծ Զ. Խրախունու «Լեռն ի վեր» քերթումաճին:

Այս եւ նախորդած գրական երկխօսութիւնները միջտեքստայնութեան (ինտերտեքստ) հետաքրքիր ու բազմատեսակ դրսեւորումներ ունեն Յովհ. Թումանեանի ստեղծագործութեան մէջ. մի դէպքում դրանք ներհեղինակային են, ինչպէս բանաստեղծութիւն-յօդուած-նամակ ժանրային փոխանցումներում, միւս դէպքում՝ տարբեր արուեստագէտների հետ, ընդ որում՝ թէ՛ դէպի իրեն եկող, թէ՛ իրենից ածանցող, ինչը թոյլ է տալիս բանաստեղծութիւնը տեսնել հայ քնարերգութեան զարգացման գրապատմական կեանքներում:

Անփոփելով՝ նշենք, որ թումանեանական գնահատութիւնների առումով մեզ համար ծրագրային նշանակութիւն ունի Պ. Մեակի «Թումանեանի հետ» յօդուածը, որտեղ հեղինակը, պարզաբանելով խորագրի ընտրութիւնը, շահնորեան առարկութիւն չվերցնող սօսով յայտարարում է. «Այն լուրջ պատճառով, որ Թումանեանը հենց նա է, ում հետ ենք մենք ամէնքս կամայ թէ՛ ակամայ, գիտութեամբ թէ՛ անգիտութեամբ»<sup>20</sup>: Թումանեանի 100 ամեակին նուիրուած իր այս զեկուցում-յօդուածում Պ. Մեակը նրա պոեզիան բաժանել է երեք հատուածի՝ Հատաչանք, Հայրենիքիս հետ, Դէպի Անհունը: Փոքր ինչ սրբագրելով դասականին՝ արձանագրենք, որ «Հայրենիքիս հետ» բանաստեղծութիւնը այս երեք պայմանական հասկացոյթների միաձուլումն է. այն բանաստեղծի ամէնից ուժգին «**հատաչանքն է՝ հայրենիքի** ու ժողովրդի ճակատագրից ծնուած, որը միաժամանակ նրա անցագիրն է դէպի իր այնքան ձգտած «**անհունը**»:

<sup>20</sup> Մեակ Պ., Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 5 / գրականագիտութիւն, քննադատութիւն, Եր., «Հայաստան» հրատ., 1974, էջ 349:

## SUMMARY FROM THE “UNKNOWN” TO THE HOMELAND (“WITH MY HOMELAND”)

*KNARIK ABRAHAMYAN*

The author emphasizes Hovhannes Tumanyan’s cognition of homeland and nation fate through poem “With my homeland”. This poem on one hand shows understanding of art and artistic way connected with his conception of the “Unknown”, on the other hand it shows the issue of patriotism in which he investigates the history of his own nation and the same time opens the conversation with the way of patriotic poetry.

## РЕЗЮМЕ ОТ “НЕИЗВЕСТНОГО” К РОДИНЕ (“С РОДИНОЙ”)

*КНАРИК АБРААМЯН*

Автор статьи попытался выявить восприятие судьбы Родины и народа на примере комментария стихотворения Ованеса Туманяна “С Родиной”. С одной стороны, это стихотворение показывает восприятие искусства и искусствоведа, которое связывается с представленными исканиями “Неизвестного”. С другой стороны, показано распространение патриотических мотивов, на основе которых исследуется история народа, а также реализуется диалог с путем, пройденным патриотическими стихотворениями.



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

3 Մայիս, 2019, Երևան (լիսագումար նիստը)

**ԲԱՅՄԱՆ ԽՕՍՔ**

ՌՈՒԲԷՆ ՄԻՐՋԱԽԱՆՆԵԱՆ ..... 3

**ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԵՐ**

ՆԱՐԻՆԷ ԹՈՒՄԻԿԵԱՆ-ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ..... 4

ԷԴՈՒԱՐԴ ՄԻԼԻՏՕՆԵԱՆ ..... 6

**ՋԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ**

ՍՈՒՐԷՆ ԳԱՆԻԷԼԵԱՆ.  
ԹՈՒՄԱՆԵԱՆԻ «ԱՆՀՈՒՆԸ» ԽՈՐՈՒԹԻՒՆԸ ..... 8

ԾՈՎԻՆԱՐ ՄՈՎՍԻՍԵԱՆ.  
ԹՈՒՄԱՆԵԱՆԸ ՀԱՅ ԿՈՄՊՈՋԻՏՈՐՆԵՐԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ..... 23

**ԵԼՈՅԹ**

ՌՈՒԲԷՆ ԱՍԱՏՐԵԱՆ ..... 34

4 Մայիս, 2019, Դսեղ (ուսանողական գիտական նստաշրջան)

**ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ՋԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ**

ՎԱՆՈՒՀԻ ԳԷՈՐԳԵԱՆ.  
ԹՈՒՄԱՆԵԱՆԸ՝ ԹԱՐԳՄԱՆԻՉ ..... 38

ԼԻԼԻԹ ՊԱՊԷԵԱՆ.  
«ԴԷՊԻ ԱՆՀՈՒՆԸ» ՊՕԷՄԻ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՓՈՐՁ ..... 45

ԱՍՏՂԻԿ ՊՕՅԱՃԵԱՆ.  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՀԱՅԵԱՑՔԸ ՆԱԽՈՐԴ  
ՇՐՋԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ ..... 54

ԼԻԼԻԹ ԳԱՆԻԷԼԵԱՆ.  
ՀԱՅՐԵՆԱՄԻՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ  
ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ ..... 62

ԱՆՆԱ ԳԱՒԹԵԱՆ.  
ԳՐԻՄՄ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ ..... 69

ԿԱՐԼԷՆ ՆԱԶԱՐԵԱՆ.  
ՄԻՍԿՈՒՆԵՐԻ ԽԱՂԱՐԿՈՒՄԸ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԵՒ ՇԱՆԹԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ..... 74

ԱՆԻ ՔԵՐՈՐԵԱՆ.  
ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԵՐԳԻԾԱՆՔԸ «ՄԵՐՈՆՔ» ՊԱՏՄՈՒԱԾԱՇԱՐՈՒՄ ..... 83

5 Մայիս, 2019, Թբիլիսի (դասախօսական գիտական նստաշրջան)

**ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԵՐ**

ՎԱԶԳԷՆ ԵՊՍ. ՄԻՐՋԱԽԱՆՆԵԱՆ ..... 92

ԺՈՐԱ ՄՆԽՉԵԱՆ ..... 94

ԳԻՍԱՆԷ ՅՈՎՍԷՓԵԱՆ ..... 96

**ՋԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ**

ԱՇՈՏ ԳԱԼՍՏԵԱՆ.  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՅՈՒՇԵՐՈՒՄ.  
ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔ ԵՒ ԼԵՋՈՒ ..... 98

ԼՈՒՄԻՆԷ ԳԱԼՍՏԵԱՆ.  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ «ՀԻՆ ԿՈՒԻԸ» ՊՕԷՄԸ ..... 111

ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐԵԱՆ.  
ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ  
ԳՐԱՔՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՁ ..... 119

ԷՄՄԱ ԱԽՏԵԱՆ.  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԸ ..... 130

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄՈՒՐԱԳԵԱՆ.  
ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՇԱՌԱԿԻՂՆԵՐԸ. ԱՐՏԱԿԱԶԴ ..... 138

ԿԱՐԻՆԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ.  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ՝ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ  
ԲԱՐԵԿԱՍՈՒԹԵԱՆ ՈՍԿԷ ՕՂԱԿ ..... 147

ՔՆԱՐԻԿ ԱՔՐԱՀԱՄԵԱՆ.  
«ԱՆՅԱՅՏ»ԻՑ ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ («ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ») ..... 155

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՎԱՉԷ ՊԱՐՏԻՋՈՒՆՈՒ ԱՆՈՒԱՆ ՀԱՅ ՆՈՐ ԵՒ ՆՈՐԱԳՈՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ  
ՆՐԱ ԴԱՍԱԽԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

«ՍՓԻԻՔ» ԳԻՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ԹՈՒՄԱՆԵԱՆ. «ԱՆՀՈՒՆԻ» ՃԱՄԲՈՎ

(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝  
ՆՈՒՆՈՒՄ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ 150 ԱՄԵԱԿԻՆ)

3-5 Մայիս, 2019, Երևան-Դսեղ-Թբիլիսի

Հրատարակչության տնօրին՝  
ՎԱՀՐԱՄ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

Խմբագիր՝  
ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Կազմող՝  
ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Համակարգչային ձևատրումը՝  
ՀԵՐՄԻՆԷ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

Չափսը՝ 60/84, 1/16: Ծառայը՝ 10.5 տպ. մամուլ: Թուղթը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 100 օրինակ:

Տպագրումը է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում

Հասցեն՝ Ազատության 24/11, հեռ.՝ 28 54 28

E-mail: vmv\_print@yahoo.com

www.vmv-print.am